Ա· Հ· 687 : Ն· Ք· 65 : ,, դիպայ պողիտևկեայ , որոյ էր Թէոդէտ կէս մեհենին
,, կանգնեալոյ ՚ի քաղաքամիջի ՚ի պատիւ երկուց եղբարց ,
,, բայց և այնպէս պողիտևկիս ՚ի մեռացօնս անկեալ էր
,, իսպառ , որովհետև մեհենին ոչ կոչիւր երբեք այլ
,, անուն՝ բայց Աբեհան կաստորի :

Լ՚այս դեպք՝ բայ ՚ի պեսպիսութիւն բուսոյ բարուց՝մուծին ՚ի մէջ կեսարու և բիւզուլոսի Թշնամուն ինչ , որ ապա յանգեցաւ յանհնարին զառանցանս :

Կեսար ՚ի ժամանակի իւրոյ չինուածապետուն պատրուակաւ պատուելոյ զիշատակ հօր իւրոյ՝ ետ առնել կռիւս սուսերամարտից՝ յերեք հարիւր քսան զոյգս , և պատրաստեալ էր ևս յոլովագոյնս : Բայց զի յայս սակս անկաւ ահ ՚ի քաղքին , երկուցեալ՝ գուցե այս սուսերամարտք շրջեսցին յայլ պետս ՚ի զասայեանս , վճռաւ ծերակուտին Թողացուցանել որոշ ինչ Թիւ սուսերամարտից՝
Պլին· լէ· ֆ· առ կռուելոյ յայն խաղս : Յուշ առնէ պլինիոս , Թէ յայսոսիկ խաղս կեսար երևեցոյց առաջին օրինակ ՚ի հռովմ, առնել զամենայն զզարդս ամֆիԹեատրոնին ՝ արճաճիս :

Զեռնէղ ՚ի կապիտոլիոնի զանգրեա մարիոսի : Լ՚այս ամ մեծագործուն չունի ինչ առանձինն՝ որ չիցէ երևեալ յայլում նուագի : Բայց աւասիկ քիչ ինչ մի՝ որ նշանաւոր առնէ զկեսար : Լ՚ասցի Թէ իւր միտք էին միշտ վերստին արճարճանել զկողմն մարիոսի : Յայս սակս իբրև ետես զսիրտս քաղաքին եռանդագինս ՚ի սէր իւր ՚ի սակս խաղոյց և տեսարանաց , ժամ էառ զետեղելոյ ՚ի կապիտոլիոնի գիշերային անդրիս ինչ մարիոսի՝ զոր տուեալ էր դրօշել ՚ի ծածուկ, զոյգ ըստ արճանի չուճուրէոյն : ՅաղԹուԹիւ զարդարելոյ յաղԹականն նշանօք , և մակագրուԹիւք՝ որք հռչակ հարկանէին պյաղԹողն կիմբրացւոց : Լ՚ընդ լուսանալ աւուրն , լուրն հնչեցեալ վասն այսց դրօշուածոց՝ Թէ կէին ձարտարագործք և համակ ոսկեձամանչք , խուռն ձգեալ զանբաւուԹի դիտողաց , և չէր ոք անդ՝ որ ոչ զարմանայր ըստ այնպիսի համարձակուԹի , զորոյ իսկ և իսկ աչքարհ ամ ծանեաւ զգործուն
Ասլևայլ կարծիք ՚ի վր ձեռներկ ցուեա : Լ՚այս քազուած օրինականայուն համարեցան զայս գործ , առ միւսանգամ առաջն նկարելոյ հռիկայ՝ զքեզուԹիս խափանածոյս ՚ի վճռոյ ծերակուտին : Լ՚սեն . ֆորչ էն է այս կեսարս ՚է բանալ գձանապարհ բռնաւորուԹ : Վա. դ գլաֆ առնուալ , ՚ռե ֆանո՞ էի֊ ֆանիդմ֊ երկայնմաուԹ . Ա եւ գայֆիկան չեռնարկուեա համարձակեցուսգ գնա չեռնարկել գասան գամ չա գծանեծա և վտանգաւոր : Օ սորին հակառակն կուսակիցք մարիոսի՝ սրտապնդեալք ՚ի համայական և

յանձակնկալ պատահարէ ասոնք՝ դիմեցին յԱմ կողմանայ, և ապրեցուցին բազմութիւն իւրեանց զպանծոսիկ՝ որք կարծեին վնասս իսպառ չքացեալս , զի ոչ ուրեք իշխեին յայտնել : Խռնեցան ի կապիտոլիոնի , և հնչեցուցանէին պիւրեանց ձայն ուրախութեան : Ի՛նչ բազմայ իսկ լալ ի գորովանաց ի տես դրօշուածոցս՝ վտարելոց յետ իշխանապետութեն սիլլայի . և զարմացեալք ընդ կեսար՝ բարձր ձայնեին , թէ նա միայն պահեաց արժանապէս զպատիւ խնամուէն ընդ մարիոսի :

Ընդ նաւուր զրոյց կատուլոսի :

Ի հաս բանն ի ծերակոյտն , ուր յարոյց աղմուկ մեծ : Յայնմ վայրի արար կատուլոս զայն նշանաւոր զրոյց : Ասէ թէ՝ Խորհելոյ չանձոյ . զի կեաս ոչ եա ընդհարձակ ընդ հասարակապետութեանդ սպառիչիցեայ ախտահարութեանդ , այլ յայս չանդիման ելեալ ինքնակոչ : Խորհրդածութիւնս եր իրաւացի : Կառավարութիւն յայնժամ հիմնեալ եր ի վրէ օրինաց և սահմանադրութեանց սիլլայի , և անհնար եր կանգնել անդրէն ըվկոյղն մարիոսի՝ առանց վեր ի վայր շրջելոյ զնմա : Ի այլ կեսար իւր հզօր և ամբիծ ձարտարութեամբ՝ զոր գիտեր քաջ վարել , այնպէս ջրեաց զկշտամբանս կատուլոսի , մինչև գլխովին հաւանեցուցանել և ծերակուտին :

Կեսար զուր չանայ առաքել յեգիպտոս : Սոսեպատիս :

Ի այլ և այնպէս ոչ յաջողեաց նմա խորհուրդն՝ զոր խորհեր , առաքել յեգիպտոս ի սակս խռովմանց յարուցելոց յայնմ թագաւորութեէ , և ի սակս պատճառաց զորս մարթ եր հասարակապետութեէ ըստ ոմանց ունել յայնմ : Ի՛նչն ինն է այս ի Պատմութէ , յոյր վերայ առաջի արարից համառօտիւ՝ որ ինչ ինձ հաւանականագոյն թուի :

Յաջորդուէ թագաւորաց եգիպտոսի յետ լաթիւրոսի : Պտղոմէոս աղեքսանդրի երրորդի : Պորֆիր . յոյնքն առ եւսեբէոս : Ագաթոն . ի գաղտակ՝ պալ . քերակ . ա : Պլուտարքոս ի կեսարս : Կիւ . ի տուալ . ա և բ :

Ցետ մահուն պտղոմէոսի լաթիւրոսի՝ եգիպտացիք նստուցին յաթոռ զկղեոպատրա զաւստր նէր : Ալէքս՝ որ յայնժամ իշխանապետեան եր , և ունէր առ իւր զպտղոմէոս աղեքսանդր՝ զորդի այլոյ ուրումն աղեքսանդրի՝ եղբօր լաթիւրոսի և մեռեալոյ յառաջ քան զնա , առաքեաց զայս իշխան յեգիպտոս , զի թագաւորեսցէ անդ ընդ կղեոպատրայ : Ի այլ աղեքսանդր յետ իննուտասն աւուրց՝ ետ սպանանել զկղեոպատրա . և ինքն ևս սպանաւ յաղեքսանդրացւոց՝ օրք յարեան ի վրէ նորա վրէ այսպիսի իւր անգթութէ : Ինձ թուի , թէ այս աղեքսանդր եթող որդի մի իւր համանուն , որոյ էին իրաւացի պահանջողք թէք ի վրէ թագաւորուէ եգիպտոսի . որովհետև հայր իւր և հաւ իւր թագաւորեալ էին անդ . այն զի և օրէնաւոր յաջորդութէ լաթիւրոսի եր շինեալ մահուամբ կղեոպատրայ : Ի այլ և այնպէս եգիպտացիք նստուցին

Ա. Հ. 687 : Ն. Ք. 65 : Թագաւոր զպաղոմիոս աւլետ՝ զանհարապատ որդի լա-
Թիւրոսի : Լաւ ևս ինձ , Թէ խոտովեցիք որք յարեան
յեգիպտոս՝ ի ժամանակի յորժամ պոմպիոս պիրկիդը
յասիա , և պարտաւորեցին զեգիպտացիս առաքել դես-
պանս առ այս զօրագլուխ , ծագեցին ի պահանջողուեց
հակառակաց՝ ի մէջ աղեքսանդրի երկրորդի , և աւետա-
Պոմպիոսի ոչ եղեն կամք խառնիլ յայս վէճ: Պաղոմիոս
աւլետ եղև ժառանգակալ աթոռոյ . և աղեքսանդրի
հարկ եղև խոյս տալ՝ ի տիւրոս , և մեռաւ անդ յետ սա-
կաւ ։ ժամանակի :

Լհաս լուր՝ ի հռովմ, Թէ աղեքսանդր՝ ի մեռանիլ լու-
րում եթող կտակաւ՝ ծերակուտին և ժողովրդեանն հռ-
ռովմէականի զամ վիւր իրաւունս՝ ի վէր յաջորդուէ լա-
պսոսանոց . ք է՝ ի վէր եգիպտոսի և՝ ի վէր կղզւոյն կիպ-
րոսի: Լ.յս կտակ ձշմարիտ իսկ՝ Թէ սուտ, ինձ կարի խին
կիւ· ՚ի ասաւ. դժուարին Թուի որոշել : Լիկերան՝ ի միում կիւերոյ ձառ
լու· ք : ռից խօսի զայսմանէ , քայց ոչ արտայայտէ զիւր միտս :
Ասոյգ այն է , զի ծերակոյտն ժառանգ յայտնեցաւ , և
առաքեաց պատգամաւորս՝ ի տիւրոս , առնուլ զՀաշիւ
արճաձոյ՝ զոր աղեքսանդրի եգեալ էր անդր յաւանդի :

Լպա Թուի ինձ՝ Թէ կեսարու կամք էին տալ վաւե-
րացուցանել զայս կտակ, վ՚ի որոյ և յինքն յանձն առնել
զՀոգաբարձուն առնելոյ զեգիպտոս և զկիպրոս՝ գաւառ
հռովմէական : Հայսմ իրողութ Թևակից իւր ուներ զե-
կբաստոս՝ զայժմեան համարակալ , ըստ որում Թուի Թէ
յայնժամ ուներ սերտ բարեկամութ : Լայց եգիպտ խոչ
՚ի կողմանէ կատուլոսի պաշտօնակցին , և այլոց բազմաց
աւագաց քղքին , որք պնդէին՝ Թէ չկայ կտակ այդպիսի .
և Թէ՝ էի ինչ և պատիւ ժողովրդեանն հռովմէականի ե-
րևիլ աչս արձակեալ ժառանգուէ Թագաւորայ , և սր-
պլըրդիլ մտանել յայմ Թագաւորութիւն : Հետինքս յայլեմ
գտան , և առաջարկուէ կեսարու եղ ՚ի դերև : Լրողու-
Թեաս զհետ գան հետևութիւք՝ որոյ ըստ իմոյ կարծեաց

1 Ընդր կամ առաբիոս , և բահիոս մա-
գենագիրք՝ որոյ ոչինչ երևայ և Լիւսէն
յիարտոն պաֆլոնէ նախնեաց , այլագի
դասասորէն ղաշտրտոնէ բաֆասորացն
եգիպտոսի յետ լռնիարտոն . բայց ընդեր-
ձեալ իմ զծանօթսն ինչ արարեալ ՚ի վէր
ֆարծէնացն բահիոսի , գերազ գոլայսցի՝ զի
անյապաղվելիւ են կարծիք Ընդրայ :
Կէեվիս ՚ի ծանօթսն ասէ զի ՚ի վէր
ասացոյ ձառի Ազգաբանական օրինացն
ինկերոնի՝ գնե ընդրդր պաղոմոս Աւետ-
ասացք՝ զրկի խօսիմ ասգանօր : Այս
լուծումն գծասարանէ բռնեցաս ինչ ին-
բեսր . և լուծանիմ գան զայս գրոնիկ
որոյ գվեց երկամ՝ յարմարագոյն ինչ՝ ի
գիմանել ընդ գիմանս զվէճսն գոր-
ծիւրի , ազգոնոսի , ասսեգանիոսի և
պլատարոսի , և գան զմմ կիկերոնի :
Ասս գրոնիկ գիպեղ ընդ գիմանս զմմ
օլիմպեացն ամասանս գգեալ ասս այլեայլ
մագենագիրս :

պիտի բացատրութիւն, յոր և ձեռնարկեմք աստանօր։

Ա. Հ. 687։ Ն. Ք. 65։

Լ՚սացաք Թէ կրաստոս և կատուլոս էին համարակալք։ Սոքա ոչ՚ի վար արկանէին՝ դոգլես և ոչ վի՚ի գործա- ւորութեց իշխանաւորուէ իւրեանց։ Ընդէր Թուարկուէին ժողովրդեան, և ոչ հանդէս համարոյ ասպետաց, և ոչ աղխասակ ծերակուտին։ Վ՚ժտուէ էին ընդ միմեանս, եթէ՚ի սակս եգիպտոսի՝ զորմէ խօսեցաք, և եթէ՚ի սակս ժողովրդոյ գաղղիոյ՝ որ յայնկոյս պատս գետոյ, զորս կրաստոս՝ Թևակոչեցէք կեսարու կամէր գրել հռովմէական քաղաքացիս, որում ոչ տանէր կա տուլոս։ Ընդէր հնար նմի միաբանել յիրս ինչ, բայ՚ի հրա- ժարելոյ՚ի պաշտամանէ իւրեանց՝ զոր և արարին իսկ։

Կատուլոս մինչդեռ էր համարակալ, ընկալաւ դժկա- մակուէ ինչ՚ի կատոնէ՝ որ վարէր՚ի նմին ամի զպանձա- ւորութեն։ Կատոնի ձեռնարկեալ էր ամիսուիել զԹիւ, և նորոգել զխուամբ դպրոց՝ որք յոլովակի առ իւրովք նա- խորդօք բազմացեալ էին յոյժ, և գործեալ էր նոյ՞ անի- բաւուէ բազում։ Ալ եգ մանաւանդ ոչ՚ի՚ որ ըստ պաշտպանուէք էր կատուլոսի, և աղաչեալ իսկ զայս մե- ծարու իշխանաւորս՝ երթալ՚ի սենեակ գանձաւորաց, և աղերս արկանել կատոնի՚ի նպաստ իւր։ Կատուլոս՝ որ համարակալն էր, և մեծարգի ևս յոյժ վ՚ի իւրոյ առաքի- նուէ, և բարեկամ կատոնի, հայեցեալ՚ի նմանուէ ի- մաստից իւրեանց և գնայից, խորհեցաւ Թէ գիւրաւ ըն- դունելի լեսցի իւր խնդիրս։ Այլ կատոն առաջի արար նմ, և եցոյց ևս՝ Թէ այր վ՚ե աղերս արկանես, է մեզատարտ։ Կատուլոսի անկարացեալ երկրորդել ինչ, համարձակե- ցաւ խնդրել, զի՚ի պատիւ երեսաց իւրոց արասցէ զայս ընորհ գպրին։ Լ՚այ զոյց կարի ինն բացական՚ի սկզբանց և յիմասաից կատոնի, համարձակեցոյց զդեռահասակ դանձաւոր՚ի սաստ խրատուց ձեռնարկել, ցուցեալ Թէ՝ չհայի՚ի վայելչական պատիւն՝ զոր պահանջէ իւր առա- քինուէն և աւագուէ։ Լ՚այց՚ի ժտել կատուլոսի և ևս, կատոն խօսեցաւ բարձրաբարբառ և ասէ։ Մ՚ենք նախաթինդ են ինչ՝ կ՚ապուէլ, համարձակ գոլով և ուղղիչ մերոց վարուց, եթէ վարելեմ զչեզ ասդի չեռամբ էնոց բաքանաց։ Ձայն բան խուռ վեալ կատուլոսի և՚ի բարկուէ բրդեալ, եբաց զբերան իւր տալ պատասխանի. բայց չգտեալ ինչ ասել բանա- ւոր, ՚ի բաց եկաց ամօթալից։ Ալակայն և այնպէս արձա- կեցոյց զպիրն։ Լ՚այց կատոն ևս՝ պնդեաց այլ չծա- ռայեցուցանել զայն պաշտօնեայ, և եբարձ զնորուն ուռձիկ։

Կրաստոս և կատուլոս հա- մարակալք անմիաբան գտանին մի- մեանց և հրաժարին։ Պլուտարքոս՚ի նրասոս։ Ցուէթոնիոս՚ի նեսար։

Աբիուէ կա- տոնի՚ի մերժ ելել զԹա- խանձանս կա- տուլոսի։ Պլուտարքոս՚ի կատ լաթան։

Ա՛ Ա. 687 : Ն. Ֆ. 65 :

Կատոն՝ ան՛ձն է այնպէս պիտանի , որ ՚ի մուտս նորա ՚ի հռչակս պաշտամունս՝ կարծեմ զմիտս հաճել զվերծա- նողաց, թէ առաջի առնեմ առ ետեղ առաքինորդութիւն պլու- տարքոսի ՝ զկենդանագիր ինչ առաքինոց ամաց այսորիկ ձիշդ իմնամակալուի առաքինուե : Ւ՛ս այս պիտանացի ըս իւրայ ինչ ՚ի սիրոփանս և ՚ի մխիթարուե ՚ի մոլութես միջի , որք յորդեն ՚ի պատմուե ժամանակաց՝ զորոց է գրուածս :

Տոհմ կա- տոնի :

Կատոն ծանուցեալ առ մեզ կոչմամբս Կատոն Ա՛ւտի- կեայի՝ էր Թոռնորդի կատոնի Հռոմայեցւոյն , և իմաներ ՚ի միոջէ որդւոյ՝ զոր այս նախահայր կատոնեանց ծնեալ էր յիւրում ծերուե երկրորդ ամուսնութե ըստ միոյ ու- րուք յիւրոց ապաւինելոց : Ա՛ երոյս կատոնի՝ էր քոյր մի համահայր և համամայր , որոյ կին՝ Ա՛որկիա անուն : Ա՛որ նը էին յառաջնոյ ամուսնուե և այլ զաւակք . յո որդի մի սերվի- լիոս կեպիոն անուն և բազում գաւերք , որոց երևելին է մայր բրուտոսի : Ւ՛ս այս մայրն մեռելոյն որբք ՚ի մա- տաղատունկ հասակի , և դաստիարակեցան ՚ի տան մե- ծանուն տրիբունին դրուսոսի՝ որ էր նոյ քեռի :

Իւր տղայ- ութե :

Ւ՛նդստին՝ ՚ի տղայական տիոց էսղայ կատոն , Թէ զինչ լինիցի երբեմն : Իւր կերպարանք երեսաց , իւր հաւաք ձայնի , իւր հայեցուածք աչաց և կերպ գնացից՝ ՚ի խաղս և ՚ի զբօսանս՝ իւրոց տիոց պատշաճականս, համակ գուշա- կէին ՚ի նմ բնաւորուե ծանրուե և անվեհեր արուե : Իւր կամք էին անյաղդողդ և կորովի , խիստ և անխոնարհելի առ շողոմուե . էր և ևս անընկճելի յերկիւղ : Ւ՛ւրաքի արա- Հպոլ. Ֆ. էջ 349 : րի այլոց զյամառ դիմակալուե նը՛ահարկուեց և սպառ- նալեաց՝ զոր ՚ի վար արկանէր պոմպեդիոս սիլոն ՚ի դրը- դուեցուցանել զնա . և այս մանաւանդ դէպք տղայութե կատոնի յայտնի ցուցանեն՝ Թէ որպիսի՛ ինչ էր անդրս- տին ՚ի մանկուե անվեհերուն նը՛ : Ո՛րիծաղէր սակաւ և հազիւ երբեք : Ո՛ղջ ենթակայ մանուանց ցասմանց՝ որք ըս վաղիւն և շինչին ՚ի տղայս . այլ ընդ բարկանալն ՝ իրաք բարկանայր , և չէր ինչ դիւրին զնոցանել զնա : Ւ՛ղայք էր և դիւրալուր , կամակալ հնազանդ իւրոց վարժապե- տաց . բայց խնդրէր զպատճառն ամի . և իւր ուսուցիչ՝ այր ՝ որ գիտէր կենցաղել , սիրէր վարել ըս աշակերտ իւր քանիս քան գանիս , հաճէր զՀետաքննուն մանկանն :

Իւր գործ- վական սէր առ եղբայր իւր :

Ա՛ենդստ և բնաւորուե կատոնի էր անյաղդողդ և խիստ , բայց չէր գազանային և անզգայ : Ա՛իրէր նա գործական

՝ Ղատոսիարակ նորա էր քաջա- նէր զբան քան զպատակ : կենցալ, որ առ Հեռնպատրա ատ ու-

սիրով վիւբ եղբայրը . և 'ի հարցանել զնա միոյ ուրուք յիւբ առաջինն ամն , թէ զո՞ առաւել սիրես , և պատաս- խանի՝ պիմ եղբայրը : 'Ի պնդել սորա՝ կամելով իմանալ, թէ զո՞ այլ ոք սիրեսցե յետ նը , կրկնեաց անգրէն . պիմ եղբայրը : Յո 'ի թախանձել նը միւսանգամ, չէտ ինչ այլ պատասխանի , մինչև լռել հարցողին : Այս սէր առաւել- լաւ ընդ հասակին . և այն ինչ եղև կատոն քսանամեայ , ոչ ընթրեաց երբէք , և ոչ ձանապարհորդեաց ուրէք , և ոչ երևեցաւ երբէք 'ի յայտնի հրապարակի՝ առանց էղ- բօր իւրոյ: Այլոյ և այնպես որ'չ էր 'ի նմանէ, զի ոչ 'ի վար արկանէը իւր անուշունս . և յամ գնացս իւր էր զգու- շաւոր և խիստ : Յո վճռ այսորիկ կեպիոն իբրև լսեր՝ զի գովեցին զչափաւորութի իւր և զիմաստուէ , ասէր . առ այ- լով գոռացէ ըէ արձանաւորէցեմ ինչ գովուըէ . բայց առ կոպոնիա Ալպէիոս՝ ան եմ ես :

Յո 'ի մի վայր քոլորելոյ որչափ ինչ հայի 'ի գորովա- կան գութ կատոնի առ եղբայր իւր , ասեմք , թէ իբ- րև եղև կեպիոն տրիբունն զօրականաց 'ի պատերազմին սպարտակոսի առ հիւպատոսութիք գեղլիոսի և լենտուլո- սի , կատոն չորքառ ծառայել յամի զօրու : Յետ ամաց ինչ՝ կատոն ևս եղև տրիբունն զօրականաց 'ի զօրուին մա- կեդոնիոյ . և եղբայր իւր՝ որ ընկերեաւն էր նմա , բայց յայտ է թէ՝ չունէը ինչ պաշտօն, կամէցեալ ձանապար- հորդել յասիա , խօթացաւ 'յենոս 'ի Թրակիա : Իբրև լուաւ կատոն՝ կամեցաւ երթալ , թէպէտ և յաչէկոծէը ժամանակի 'ի Թեսաղոնիկեայ ուր էր յայնժամ. և չկա- րացեալ գտանել ստուար նաւ մեծ'եմուտ 'ի փոքր նաւակ երկոքումբք բարեկամք , և երիւք սորկօք : Վ տանկե- ցաւ յոյժ . և բարեբաստուէ իւր միայն անակնկալ վէր- ծոյց զնա յաչէկոծուէ : Հասեալ 'յենոս , եգիտ զեղբայր իւր մեռեալ . և թուէր՝ թէ յայնմ պահու յաղթեաց յաւն՝ իւրում նմ իմաստասիրուէ : Ոչ ելոյ միայն , այլ և գիրկս արկեալ զմեռելով անկաւ 'ի խոր տրտմութիւն : Այլոյ և արար մեծամեծ ծախս 'ի Թաղել զնա եղբայր՝ պատուական խնկովք և ոսկեհուռ դիպակօք՝ որք այրե- ցան ընդ նմա : Յո չաւել կանգնել նմա 'ի հասարակաց հրապարակին ենոսոյ՝ դամբարան յանգիւտ կձոյ մեծա- գնոյ , ծախեալ յայն ուր տաղանդս ,(որ է քսան և չորս հազար լիրայ գաղղիոյ) : Այլոյ և այնպես այն գե-

1 Ցայն ինագիր՝ դնէ ապանօր Սիպ- պիոս , անուն անձանօր . որոմ չէ ինչ պատմեալ ի ծննդեան նը : Ակիկիոս , անուանի որդագիչ , որ- պարտեպ լինել ազատազրօք անուանս

Ա· Հ· 687· Ն· Ք· 65· րեգման եր Թափուր , որպես յայտ լինի ընդ հուպ ։

Ի յս ծախիք առնի եղեն սմանց յանկրաւն մեղադիր լինելոյ նոր· զի պնդեին՝ Թէ չէր անկ հասմատուճե և անպատձոյ գնացից՝ զոր երևեցուցաներ կատոն , զայդ առնել Ի յայց ոչ [1] գիտէին ասել պլուտարքոս , քանի՞ մեռերք քաղցրուե և գորովական սիրոյ կային յայնմ վայրագ սըրտատնդուե , և քանի՞ դիւրազգածելի եր այն՝ որ անպարտելին եր՝ի հեշտուեց , յահարկուեց , ՚ի վտանգէ , և ՚ի ինդրուածոց՝ որ ընդդէմ արդարուե ։

Երևեցոյց նա յայսմ վայրի մեծասրտուեՆ ինչ՝ ոչինչ ընդհատ յիւրմէ բարեյաջար սրտե ։ Վաղաքը և իշխանք մեծակայ տեղեաց առաքեցին նոր մեծամեծ պարգևս ՚ի պատուել զնիշատակ կեպիոնի ։ Հրաժարեաց՚ի փողոց , և էառ միայն զծխանելիս և զայլ այսպիսի նիւԹս , բա ժանորդս արարեալ պատուոյ յուղարկաւորուե և զայնոսիկ՝ յորոց էառն ։ ԱռանգուԹե եղբօր իւրոյ հանդերձեալ եր բաշխիլ՝ (չգիտեմ ։ վե որոյ իրաց) ՚ի մէջ իւր , և ՚ի մէջ մատաղ դստեր միոյ Թողեցելոյ ՚ի կեպիոնէ ։ ՚Ի բաժանելն՝ կատոն ոչ ինդրեաց ինչ վե ծախուց , զոր ա րարեալն եր վասն դամբարանի նորա ։

Ի պա յանկրաւն յետ բազում ժամանակաց ամբաստանեցաւ ։ ՚ի կեսարէ , (յայտ է Թէ ՚ի գրուեցս իւր Հակառակս կատոնի ,) Թէ մաղեաց զաձիւն եղբօր իւրոյ , որոնել ՚ի նմա զոսկեփոշին ասղնեգործ կերպասուց , որք այրեցանն ընդ մարմնոյ կեպիոնի ։ Ի յս նախատինքը ընդ ա սից պլուտարքոսի , ցոյց է միայն՝ Թէ կեսար կարծեր Թա զայցուցեալ զնմ իւրում գրչի , որպես իւրում սուսերի ։

Հուսկ ուրեմն՝ կատոն յետ ձանապարհորդուե ասիոյ՝ զորմէ խօսիլ ունիմք ընդ հուպ , իբրև եմուտ ՚ի նաւ դառնալ ՚ի Հռոմ , իւր բարեկամք խրատ ետուն նմա դնել զսափորն՝ յոր եր մխիր եղբօր իւրոյ յայլուս նաւի , և ոչ տանիլ նաւաւն՝ յոր մնանելոյ եր ինքն ։ Կատոն մերժեաց զայդպիսի խորհուրդ . և յայտ արար , Թէ նախամեծար ընտրէ կարձիլ ՚ի կենաց , ընդ մեկուսիլ յայնց մխրոց՝ որք սիրելի և պատուական էին յաչս նորա . և Թէ

1 Ո՛չ յայն ինչ հայեցեալք՝ Թէ յանընձկձելի հաստատուԹե առնն ՚ի հեշտուեց , յահարկուեց և յանպատկառ ինդրուածոց՝ որոցան եր հեզուն և սէր գորովական ։ Պլուտարքոս ՚ի փոքր նոպն · երես 764 ։

2 Թերեաս երկու եղբարցն կեպիոն և նոպն էին արաբեալ զբաժանուն ձանաչին ։ Ի մահուն կեպիոնի՝ որ Ռոդոյր փոպրկի մ մանկահասակ , բաժանուն ընկեր կիներ հարկաւոր ։

3 Ընդուն կեսարու լիր ՚ի Բիւգբրին պլուտարքոսի՝ որպիսի այժմ ոնիմք ։ Բայց այսպես իսկ ազատելոյ փոլով Բիւգբրին , ըստ բառականին նշանակելոյ երևի ՚ի նմա կեսար ։

ՃՀ Ա. 687։
ՆՐ. 65։

Եռանդն կամսի ազգիկեան իմաստասիրուն։

էհաւատայ ումեք զիոյնի փոխադրուեն նոցա յիտալիա։ Արձանագրեալ արդ յուսմունս կատոնի։ Իմաստասիրուն ազգիկեան էր կարի լիւն հանգուցատիպ իւրում ընաւորուեն, որ չպիտեր այլ յորդոր վ՚ն նը։ Լսեալ զսկզբունսն նը առ անտիպատրոսիս տիւրայացի. յոր [1] պատաղեցաւ կաթոգին, ո՛չ զի ուսոյն միայն խօսիլ՝ ոչ առնէին այլք բաղումք, այլ զի կարգեացեն ըստ այնմ զիւր գնացս։ Յաւիրշատեալ մտօք՝ որպէս բանից կարգ է ասել, ըստ այմ՝ որ հայի յառաքինուեն, ո՛չ իւիք զանց արար զմասամբք նորա։ Այլոյ խանդակաթ էր առ անդրդուելի պաշտպան նուիթի արդարուե, և կամակար յամառուե, որ ո՛չ կակղիւր ո՛չ ի նպաստից, և ո՛չ յահնառուե։

Ճանաչաւորուի իւր առ ստոյիկեանց ուսուին՝ այնպէս էր ունճ, որ մինչ էրն ի մակեդոնիա տրիբուն զօրաց, լուեալ՝ զի խօսեին զուարճանուն ստոյիկոսի՝ սիթենոդորոս անուն, որ մեկուսացեալ մնա ի պերգամոն և հասեալ յալիս ծերուիթե, անդրդուելի ընդդէմ դառնայր հրաւիրանաց յոգունց իշխանաց և թագաւորաց, չհամոզեալ թողուլ երբեք զիւր առանձնուի, եդ ի մտի՝ ոչ զիարդ և իցէ, ձգել զնա առ ինքն։ Վ ստահ էր յոյժ իւր առաքինուիթե, և ակն ունէր ի գլուխ տանել, յորմէ այլք բաղումք վրէպ գտան։ Այլ և վարկաւ թե բանն չէ այնպիսի իւն՝ որ գրովք վճարիցի. ձեռն էարկ յերկամեայ հրաման ձանապարհորդուե, որ հասարակ օրինօք ընորհեալ էր (սպային) փոխել ի պերգամոն։ Ել յաղթեալ դիմակալուիթե աթենոդորոսի, առ եբեր զնա ըստ իւր ի քանակն, առաւել պանծացեալ զի իւրոյ այսմ ստացուե, քան զպարծանս պոմպէոսի և լուկուլլոսի՝ զի զբռամբ նուաճէլոյ նոցա զայնչափ ազգս և թագաւորուիթիս։

Մէս գնէ ձարտարիսասուե։

Կատոն միա եղ ձարտարիսասուե՝ ոչ զինու պիտանւոյ ի պաշտպանել զիրաւունս արդարուե, և ի պնդել զիրաւացի փաստս։ Այլոյ և այնպէս թուի թէ կամէր նա թաքուցանել զայն։ Օ՚ի ո՛չ երբեք ի վար էարկ զայն ըստ իւր հասակակից պատանիս, և ո՛չ լսելի եղև երբեք նորայն բեմբասացուե, և ո՛չ ի խնդիր եր առաքի հանդիսանալոյ, մինչև ասել ցնա երբեմն միոյ ուրուք յիւրոց բարեկամաց. Պոփէոս է ղբռոնէդ։ Այս կատոն ասէ։ Ել էդի էակ պոփէոս ոչ ձափ կամ էղեն, գայն ըստ գ՚գոյէ ինչ պոփէոս՝ ի գնացս իմ։ Այս

1 Յայսոսիկ յարեցաւ սրսկ մը, ոչ վիճաբանուիթե ա՛ զգաւ՝ ոչ առնեն յոբունք, այլ առ՝ ի կեալ ըստ այնոցիկ։ Կին։ վան Տաբենայի։ համար 62։

Ա. Հ. 687։ Ն. Ք. 65։

ակիզբն կալայք խօսելոյ , յոքոմ կարղացայց առնել այնպէս , որ ոչ աքանացայք դադարել ի լռե՛ն ։

Կայց և այնպէս պարտաւոր համարեցաւ զանձն՝ պաշտպանել հրապարակախօսուԹ ղկիշատակ ինչ իւրոյ տոհմի և անուան ։ Յովնր էին տրիբունք ժողովրդեան Նստիլ յունկնդրուԹ ի Պորկեան Ա՝ասլիգայն՝ զոր կառուցեալ էր կատոնի համարակալն . և զի էր անդ սիւն մի՝ որ խոչ էր նստարանի նոցա , կամէին բառնալ զայն , կամ փոխադրել այլուր ։ Պատանին կատոն ընդդէմ եկաց այսմ։ և արար յայս տակս այնպիսի ձառ , մինչև սխրալի երևեցուցանել եԹէ զիւր ձայնատարխօսուԹիւն , և եԹէ զազնուականուԹ իւրոյ ի մանուհից ։ Ա՛իւր չէր ինչ զուգական ձայն իւրոյ հասակի ։ Ջէր ինչ ի նմա պաՀպՀ և փաղփիւն ըղձակերտ . այլ էր անպարդ , միօրինակ , լի՛ իմօք և անծաղր , մինչև մա՛րԹ էր կոչել խիստ ։ Կայց ամիսի բացատրուԹ իւրոյ մտածուԹեց՝ ունկեր ինչ ամբարտաւ . և ծանրուԹիւն նմին բնաւոր ՝ էր այնպէս քաջ յարեալ յարմարեալ ընդ բնուԹ դատին ՝ զոր ջատագովէր , մինչև շահիլ նմ՛ զսիրտս ունկնդրացս ։ ՀաՃելի իմն է տեսանել , զպատանի ոմն սրտմտօք և գօրովանօք՝ ձեռն ի գործ արարել վ՛ն կիշատակի պանծագունին իւրոյ նախնեաց ։ Ջայն իւր էր ուժգին , մինչ ո՛չ միայն լսելի լինել բազմամբոխ ժողովրդեան , այլ և տոկալ անվաստակաբեկ ։ Կազմ անգամ պատահեալ էր կատոնի խօսիլ զօրն աղջոյն անհոնջ աննուազ կրկուև եՀաս վախձանին որում անձկայր՝ ի գատ իւր ընդ տրիբունս , եմուտ անպրկէն ի լուռն , և ետ զանձն մեսանգամ կիւր մարզս ։

Խնամ ունի կորովանալոյ և կազդուրել ցուցանելոյ զմարմին իւր։

Ո՛չ միտ եդ միայն իւրում ոգւոյ , այլ և խնամ կալաւ զօրանալոյ , և կազդուրացուցանելոյ զմարմին իւր յօգուտ և ի պէտս ։ Ո՛ւ այսորիկ ընտրեալացր տանիլ տօԹայ և ցրտոյ . ի կալ բացագլուխ յարևուտ և ի ձիւնաբերս . ի գնալ Հետի ո՛չ միայն ի ձեմս , այլ և ի ձանապարՀորդուԹիս՝ յորում և իցէ եղանակի ։ Իւր բարեկամաց՝ որք ընկերեին նմ՛ , էին Հեծեալք , և կատոն գնայր Հետի՝ երբեմն ընդ այսմ և երբեմն ընդ այնմ , ի խօսիլ ընդ նոսա և զձանապարՀայն ։ Ի հիւանդանալ իւրում ո՛չ գիտեր այլ ինչ , բայց զՀամբերուն և զանսուաղուն ։ Փայփայիւր ի սենեակ իւր , և ո՛չ տայր մուտ եԹէ ոչոյն յայցելուԹիւն , մինչև զգայր առողջուԹիւն ։

Ընտելանայ աՃելագանց գինեըմբուայց։

Ի հայկերոյԹս իւր ո՛չ Թողայուցանէր , Թէ լինի խառուԹիւն ի մէջ իւր և այլոց կոչնականայն ի սեղան ։ Այլև նա ընդ բազում ժամանակս գաստ յոյժ ի գինւոյ ,

արբեալ միանգամ միայն յետ կերակրոյն , վկիւն որոյ մեկնիւր ի սեղանոյ ։ Այլոյ ուսաւ փոքր փոքր ըմպել քա- զում , և յերկարել զսեղանն յոլովակի մինչև ցառաւօտ Իւր բարեկամք անմեղադիր լինեին նմա՝ ասելով . քանզի զքաղեալ ։ և զբոն ցերեկ յերոյզուն հասարակապետուե անսփոփ , ոչ միայ նմ այլ ժամանակ՝ բայց գիշերայինն , ի վայելս կենակցուե ըստ գրագէտս և ընդ իմաստասէրս ։ Այլ մեմիոսի ուրուն կամեցեալ ի ժողովի ուրեք յառ- դիմանել զկատուն վն այսր իւրոյ սովորութե՝ ասելով , անդուռանէ զքէնէրն ամ ի գինեբոս , կիկերոն անբասիր ա- րար զնա ասելով զայս պարսաւագէտ ։ Այլոյ գէղ վարեն ձեղաբեր լինել նմա , ըստ անդուռանէ զիսն ոզնոյն ի խաղալ զնոբա- Այլոյ ինչ մարթ եղև ասել , ի պահել զպատիս կա- առնի ։

Պլին. Բաղ. ք. ժբ.

Այլոյ ջատագովութիւն յիւրմէ կարի ինն տկար՝ լինի ամիս անբաւական , եթէ ձշմարիտ իսկ չարախօսուն կեսարու զնմանել՝ թէ հասանէր ցարբեցութե ։ Ըգիտեմ , թէ ի հաւատս ապաստան ձշմամոյ ուրուք՝ արժան իսկ հա- ւատալ դիպուածոյս , զոր արդ առաջի առնեմ ։ Կանգի պատմէ կեսար , թէ կատուն գտաւ արբեալ յանկեան ու- րեք փողոցի՝ ի խմբել ոմանց , որք կանխեալ ընդ ա- ռաւօտն երթային ըստ սովորուե յայգորել զոք յաւագան- ոյն . և թէ՝ իբրև ծանեան զնա՝ ի բանալ զերեսս նր , շառագունեցան յամօթոյ ։ Ի վր բերել . գնալ կարծել ոչ , այլ ըստ կարի էին ըմբռնեալ ի չարագործն , այլ ինչպէս ի կարանէ ։ Պլինիոս յուշ առնէ իրաւամբք , թէ խորհրդա- ծուածս կեսար գովէ ի վիր ձշնամին ի կամիլ իւրում պարսաւել զնա ։ Ո՛ի ձշմարիտ է թէ ախտ արբեցուե՝ ախտ գոլով սեփական բնաւորեալ և անարդ խառնաղանձից , անախորժ ընծայէ զծանրաբարոյուն անձին՝ որպիսի էր կատուն ։ Իսկ կարծիք սենեկային՝ իւր անչափ գրուատո- ղն և իբր երկրպագուի՝ որ իշխէ ասել , գիւրինն է ար- բեցուե պարկեշտանալ , քան կատուի մոլիլ , զոյգ է և միայն անտեղի , այլև խանգարիչ ամ բարոյականուե ։

Քաղցր էր նմա հակառակիլ ոմոյ իւրոյ դա- րուն ։

Կատուն էր եզական ոք , վ՛ն այսորիկ չէր արժան ամիս նմանողք լինել նմ . օրինակ իմն . ինձ թուի անտեղի , թէ- պէտ և ի նուէր թեթև , հասատատել նր ի միտս ըստ եմ

1 Կատուն՝ գինեաւ արծարծա- նէր զանձն ատժանաբեկ ի հոդոց հասարակաց ։ Սենէս . յաղթ . Ա- դրբմաթ . հատ . 15։

2 Ահնպէս ասգամանէ՝ մինչև գտ- ւել ։

3 Ի գեմս ածաւ կատուի՝ ար- բեցուին ։ Որ միանգամ (զայս) ի գեմն ածցէ , գիւրագոյն ևս հա- ւատս կացուացէ զայս մեզուի , քան անգունելի զկատուն ։

Ա. Հ. 687։ Ն. Ք. 65։

դառնալ ոսկերուէ իւրոյ գարուն յանտարբեր իրողուէիս։ Ա՛ծ այսորիկ՝ տեսեալ թէ ծիրանւոյ վասն և փաղփուն գոյն՝ եր առ ժամն՝ի համարի, նա ընտրեր զմոյկն և զլոլթագոյնն։ Այրևեր առեպ՝ի հրապարակի վիճաւորեր անպատմաճառն և առ տնին հոգևոր թափառ։ Ի՛ զուր է պլուտարքոսի մեկնել, թէ կատու չառներ՝ի ցոյս զայսպիսի էգականուէիս. իւր կամք եին ուսանիլ՝ ջամբչել, քայց միայն՝ի միրապես ամենայնեացն։ Ի՛այց այր խոհական և մտացի՝ որ գիտէ էգական ոճն հանդիսանալ լիով կիրառուէք պիտանի առաքինուէեցս, խորչի՝ի հակառակելոյ հասարակաց սովորուէ՝ի չնչին իրողուէիս։ Ի՛նկ է նման յերիւրիլ և անսալ հանրական սովորուէց, յորժամ են անմեղք։

Իւր մեծ միտ անգըրգռուէի։

Ի՛ երանձնուէն և արիուէ կատուին էղեն արդեօք զարմանալի. քայց խառներ ըզ այն երբեմն ամբարհաւանձուէ, և արհամարհուէ այլոց. զոր սենեքայի մարթ է առնել նիւթ գովեստի, քայց ոչ գովին երբեք յայնց՝ որք գիտեն որոշել զմեծամտուէն յառաքինուէ։ ,, Կատուն (ա- ,, սէ՝ սենեքա) ընկալեալ ապտակ յերեսս, քնաւ չդար- ,, կայաւ, և չէղև վրէժխնդիր։ Ի՛չ միայն ներեաց յան- ,, ցանցան, այլև զպատակիլ իւր ղշայաւ՝։ Օ՛ի խորհելը ըզ թարգմանի իւրոյ մտայ, թէ իւր առաքինուէն այնպէս եր վերամբարձ, մինչև արհամարհուէն չէլինել այնմ հասու։ ,, Այոյց մեծ վհանձնուէն (ըստ կարծեաց սենե- ,, քայի) ոչ ճանաչելով զարհամարհուէն, քան ներելով ,, արհամարհուէն։ Այս՝ չգտանէն (ըստ ասից նոր այլոցն) ,, զարհամարհողն՝ արժանի իւրում բարկուէ, և տեսակ ,, ինչ յետին վրէժխնդրուէ քան զնմա։ Ի՛ատուէմբ խորա- ,, գոյն և պատուհաս զվերս ինչ՝ կամաք վրէժխնդրուէեն։ ,, Այ՛ և արդարև մեծ, որ հանդոյն աւուիծու անհոգ ,, ունկնդրէ հաչմանց կորեանց՝՝։ Ի՛րուէն այդպիսի՝ մեծամիտ և ամբարտաւան, քայց հանդարտակ սկզբանց գարոցի սոփկեանց, յայտնի ցոյց է՝ թէ մարդկային իմաստասիրուէեն ոչ ուղղէ զմոլուէեն, քայց եթէ այլով մոլուէեն։

1 Կատուն՝ յորժամ ապտակ յերեսս ընկալաւ, ոչ ջեռաւ բարկուէեն, ոչ զանազգուէեն վրէժ պահանջեաց. և ոչ իակ ներեաց, այլ զերեզման ժխտեաց։ Ե՛ւս մեծասիրտ ցուցաւ յոչ ճանաչելն՝ քան՝ի նեբրեն։ Սենեկա. յաղագս Ազդրտուէ՛ն խնայողին. համար 14։

2 Ազդ վրէժխնդրուէ է թշնամանալից՝ չերևիլ արժանի վրէժառուէեն։ Խաղալմբ զթեթև նախատինս՝ խորագոյն ևս հարատեն՝ի սիրտ իւրեանց՝ յորժամ հանեն ըզ վրէժ քինու։ Կա՛ մեծ է և աչնուագոյն, որ զոչին գազանի մեծի՝ զհանձն չնչաց կորեանց ընկ աներկեան։ Գոյին յաղագս բարկուէեն։ գիրք է։ համար 32։

Ա. Ե. 687։
Ն. Ք. 65։

Լ.յս քիծք՝ որ ի վարս կատանի, չուշին արտասահմա-
նել զնա ի Թուրք երևելի առաքինեացն հեԹանոսաց է-
լևէլոյ յաշխարհի։ Կռովելի ինն է, ևի ի վեղձ քաղաքի
և ի համարձակագնաց կրօնի անցոյց վիւբ մանկուն կա-
տարեալ իմաստուԹիւ։ Ի՛ւ գիտաց վայել սէր օրինաւոր,
բայց վիւրոյ կնոջն։ Յնդրեաց նախ առաջին պլեպիդ՝
որ խոստացեալն էր մատելլոսի շիպիոնի, բայց լուծել էր
ամուսնութիւն. և այն ինչ կրքիւր կատոնինն՝ շիպիոն չըր-
ջեցաւ ի մտաց, և նախամեծար ընտրեցաւ։ Լ.յս նա-
խատինք՝ խոր խոցոյին զսիրտ իմաստասիրիս։ Կամէր
ձեռն արկանել ի փուրչիշ ըստ շիպիոնի. բայց յիմացու-
ցանել իւրոց բարեկամաց՝ Թէ ծաղրական իմն է այդ,
Հարկ եղև Հանել զվերջ քինուն մեծավերջ իմն հագներ
գուշ, յոր գՀետ չոքաւ կծուսէ արքիլոկոսի, բայց ոչ
ցոփաբանութիւն նմ։ Լսրև Հովացաւ տապս, ամուսնացաւ
ըստ աթիլեայ գստեր սերրանոսի։ Նայց գժբաղդ գտեալ
ըզ վերլիոս բարեկամ երկրորդի շիպիոնի, ափրիկեցւոյ,
անՀնար եղև նմ՝ այնպէս առնել, որ այս իւր առաջին ա-
մուսնուի՝ լեցի և մի միայն. վ պակասամիտ գտեալ կըր-
նոջ սորա ըզ վնորայն, Հարկեցաւ ի բայ արձակել զնա՝
յետ ծնանելոյ ի նմանէ երկուս որդիս։

Ձառայել էր
կամաւորութ
ի պատերազ
մին սպարտա
կոսի։

Լ.ր արդէն ամուսնացեալ, յորժամ չոքաւ ի մակեդո-
նիա ոմն արիւնուն զօրականաց։ Լ.սայի իսկ, Թէ յառա-
ջագոյն ծառայեալ էր կամաւորութ առ գելլիոսիւ հիւ-
պատոսաւ ի պատերազմին սպարտականոսի, և յայնց ժա-
մանակաց Հետէ գարմացեալ էին ընդ նա, և նախանձա-
ւորք էին նմ։ Օ՞րացեալ էր ի Հռովմէական զօրու վեղ-
խուէ և անկարգուէ։ Կատուն ձգեաց յիւր վ՚ը զաչս ամե-
նեցուն վ՚ը իւրոյ անպաճոյճ պարզուէ և ՀամեստուԹէ,
միանգամայն և քաջասրտուէ ի վտանգաւոր դէպս և ի
յաձախ փորձս արիական ոգւոյ։ Հրաժեշտ նէր ի զինուո-
րական պարգևաց՝ մատուցելոց նմա ի գելլիոսէ, որոց
պնդէր չլինել արժանի, Թուեցաւ կարի իմն նորանշան.
մինչև նոցին իսկ՝ որք զարմացեալ էին ընդ նա, խիստ
Թուեցաւ օրինակ այդպիսի. զոր Թէպետ և մեծ Համա-
րէին և գեղեցիկ, բայց և կարի իմն վերագոյն քան զկար
իւրեանց՝ նմանող լինելոյ նմա։

Ձառայէ ոմն
արիւնուն զօ
րականաց ի
մակեդոնիա։

Յորժամ էլ գնալ ի մակեդոնիա, տարաւ ընդ իւր
հնգետասան սարուկս, երկուս աղատագիրս, և չորս բա-
րեկամս։ Ընդ ոմ Ձանապարհն՝ զոր առնել ունէր ընդ
յամաք, չոքաւ միշտ ըստ իւրում սովորութ՝ Հետի, մինչ
իւր բարեկամք գնային Հեծեալ ի Ձի։ Լսրև եՀաս ի

Իւր սպրալի
գնացք յայտ
պաշտամն։

Ա. Հ. 687։
Ն. Ք. 65։

զօրն , և ,, յանձն եղև նոքա՛ի ռուբրիոսէ զօրագլխէ իւր
,, մէ՝ հրամանատարութիւն միոյ լեգէոնի , վարկաւ , թէ
,, սպայի՝ որում յանձն է այնպիսի հրամանատարութիւն
,, երևելի , չէ բաւական երևիլ անձամբ առաքինի , այլ
,, հարկ է թէ և զօրս ենթ ընդ հրամանաւ իւրով՝ ապատակ
,, իւր նմանողս ։ Այս սակս ոչ՛ի քաց եբարձ զարհարկուն
,, հրամանին , այլ՛ի վէր յաւել զպատճառն և զքաղցրու-
,, թիւն , յառաջացեալ յայնմ համականաք , և տեղեկացու-
,, ցեալ ստորադաս սպային և զօրականաց զվճռ էրն նմին՝
,, զոր հրամայէր . յոր յաւելոյր զպատիժս և զվարձս ըստ
,, իւրաքանչիւր ձանապարհաց ։ Այլք այսպիսի գնացեալ է-
,, ղեն աքանչելի. մինչ դժ ուարին է ասել , արդեօք սովին
,, կիւր զօրականս խաղաղասիրս արար , թէ պատերազ-
,, մասէրս. բարեյանդգնե՛ն՛ի ձեռնարկ, թէ զաւսպ՝ յակ-
,, նածուէ օրինաց արդարուե ։ Հնէղ էին Թշնամեաց ,
,, քաղցր և սիրելի դաշնաւորաց . երկչոտ՛ի չարէ , և ե-
,, ռանդնոտ առ արժանանալ գովեստից ,, ։ Իվ գաղափա-
րիս նորահաս հայաբարպետաց . և առ իմ՝ սակաւագիւտ
իցեն այսպիսի օրինակք ։

,, Պատուն չարար լինչ յօգտախնդրուէ անձին , քայց և
,, այնպէս քաղեաց զպտուղ իւրոյ բարիոք գնացից ։ Ոչ-
,, հնար էր մեծ ևս լինել յարգի և երախտագիտութե ,
,, ակնածուե և գօրովանաց՝զոր ունէին իւր զօրականք առ
,, նա։ Ցեսանէին՝զի մտադիւր կատարէր զամ՝ զոր այլոցն
,, հրամայէր ։ Ոմանց էր առաւել լոկոյ զօրականն՛ի
,, զգեստս, ՛ի սպասահարկուէիս և՛ի հանդերձանս ձուոյ .
,, և բազում իւիք առաւել ոյր ծանրաբարոյուէ , ապնուա-
,, խոհուէ և ընդարձակամտուէ քան զամենեսին զնոսա՝
,, որք զանուն կրէին զգօրագլխի և զվիսխահիւպատոսի ։
,, Պատուն յայսմ ամի ոչ կայր այլ նպատակ առաջի ,
,, քայց ազգել՛ի նմա զսէր առաքինուե , և ազգել՝ ոչ կա-
,, մեցեալ և ոչ զմտաւ անգամ ածեալ զիւրոյ անձին
,, սէր ։ Ոչ զի անկեղծ սէր առաքինուեն ոչ մտանէ՛ի
,, սիրտ , առանց ախորժակի և յարգի առ այն՝ ուստի ու-
,, սանի ։ Ոլք միանգամ շատ համարին գովել զբարեկիր
,, անձինս առանց սիրելոյ զնո , մատուցանեն փառաց նոյ
,, զպարտուպատշաճ պատիւ , քայց ոչ սքանչանան , և ոչ
,, նմանողք լինին նոցուն առաքինուեն ։՛Ի ժամանակի
յորժամ կատոն էր տրիբուն զօրականաց՛ի մակեդոնիա,
մեռաւ եղբայր նորա կեպիոն ։

՛Ի լրանալ ժամանակի իւրոյ պաշտաման՝ յուղարկա-
ւորեցաւ՛ի չուս իւր , ոչ ձայնարկուքք և ըղձմամբք՝ ոյզ

Ա. Հ. 687։
Ն. Ք. 65։

պատահէր քաջմայ, այլ՝ ցուցմամբք սրտցաւութեանէ և ակնածութեանէ, զորս յիւրաքէ՛ կ համարել մի միայն և անզուգական իմն։ Ընդհասարակ կոծէին. անզլուխ գրկախառնէին. վձեռս հատուրէին, և զօրականք և ժողովուրդք տարածանէին զհանդերձս իւրեանց՝ ի վե՛ր ձանապարհին՝ ըստ որ անցանելոցն էր։ Ասկ կայցէ խնդութեի՛ քաղցը, և փառաբանութեի՛ վերևիլ այսպէս առաքեալ զորովականն սիրոյ և հասարակաց յարգի։ Այս արդ՝ ամէն համեմատեա՛ ըստ մեծութեան գլխովին հիմնելոյ յառաքինութե՛՝ զչնչին շքեղութի՛՝ զոր բազումք ջանան յօրովակի՛ ի ձեռն բերել մեծահանդէս սպասահարկութե՛ք, և համադամ խրախճանութե՛։ Ընդի՞ մնջ կ երկոցուն։

Կատոնի՝ յառաջ քան զդառնալն՝ ի հռովմ, կամ էզև ձանապարհորդել յասիա, ՝ի զննել զայն գեղեցիկ երկիրն, ՝ի տեղեկանալ բարուց քնակչաց, և ՝ի հասու լինել զօրուե ժողովրդոց և գաւառաց։ Այր նը՛ միւս ևս առի՛։ Ցէյոտարոս արքայ աղաչէր զնա ստէպ գալ՝ ի տես իւր. և զի իշխանս էր վաղնջուց բարեկամ իւրում տոհմի, կամէցաւ հաձել զմիտս նը՛։ Այս դու տես թէ որպէս ձանապարհորդեր։ Ալ՛ իւրք նմանեալ պերձուե այլոց ծերունեաց ծերակուտին՝ որք պահանջէին մեծահանդէս ընդունելութի՛ս, և զի իրաց ինչ հարկս ևս հանդիպեսցի՛ նոցա՝ ըստ որս անցանէին. սա զանայր ուշիուշով չծանրանալ ումե՛ք։ Ընձակեր վաղքաջ ըստ առաւօտան զիւր խոհարար, և զիւր հացեփեաց, զի հասցեն կանուխ՝ ի տեղին՝ուր ագանելոցն էր։ Ատանէին հասուցուի՛ և անշշունջ՝ ի քո՛ղքն. և թէ կատոնի չէր ոք անդ ծանօթ, երթային միաբան՝ի պանդոկի, և պատրաստէին զձաշ ինն իւրեանց. և թէ չկային անդ պանդոկիք, յայնժամ երթեալ առ իշխանաւորս քո՛ղքին՝ խնդրէին՝ի նմանէ տեղի իջեւանի, և շատանային նշանակեցեալին։ Ալտուրմ անդամ լինէր նը՛ և ստուգանուե՛ի, զի չառնէին ինչ շուինդն կամ սպառնալիս. և կատոնի եկեալ՝ չգտանէր ինչ պատրաստական՝ ի տեսանել և նա ևս, չպահանջէր ինչ մեծարանս. նստեալ լուեալին՝ ի վե՛ր կամուց իւրոց՝ համարիւր որպէս աննշան ոք և երկիւղած։ Ալայց երբեմն խօսէր և ահեղաձայն ըստ իւրումն ասելոյնի. և կռչեալ առ ինքն զիշխանաւորս՝ ասէր ցնոսա։ Ընաքեցարո՛ք ո՛ղորմելո՛ք, ՝ի չերմն խոպոռե՛ք, և յանհոգութե՛ ասէք պարբեաց ասպնջականութե՛ն։ Ընդհնէին ոչխար որ գայցէ՛ ի չեր չաղաց, ո՛չ լինի երբե՛ք պէտն։ Չոգուն՝ ի նոցանէ՛ ի խնդիր են պատրաստել՝ առ բռնանալ, պնդելոյ անհոգոցայ։ Ալանխեցէ՛

Կատոն ձանապարհորդե յասիա։

Իւր անպաձոյհ գնացք և քաղցրութի։

Ա. Հ. 687։ Ն. Ք. 65։

չան պնոցայն չարաչամուրէ չերովք մարտավարուրէք և ահնաճուրէք։ Արդեօք ես այսմ՝ ի գէպ, յիշել զպատահարն՝ որ առ դուրս անտիոքայ։

Պոմպէոս այնպէս յարգանօք ընդունի զնա, մինչև ուսուցանել ժողովրդոց ա նոյ՝ անն ա ձել՝ ի նմա նէ։

Բայց պոմպէոս զգաստացոյց իւրով օրինակաւ զանհոգուն նդ, որք կեղծաւորին չձանաչել զկատուն, և չմանտուցանին նմ վայելչական մեծարանս։ [1] Ո՞ւր գի այս զորագլուխ մինչ երն յերեսոս, իբրև ետես՝ թէ գայ կատուն յողջոյն իւր, ոչ թէ՛ ի մուացմնս արկէշ զնւր վերապոյն վճռակ՝ զոր տային նմ իւր իշխանուշիք, իւր յաղթուշիք և իւր հրամանատարուշ՝ ի վէր առաջանան բազմագունդ զօրուս ինքնակալուշ հռովմայեցւոց, յոտն եկաց, ընդացաւ ընդառաջ, եւ՛ղ զնա գովասանս՝ իւր իսկ առաջի, և նա առաւե՛լ եւս մեկնելոյ նդ. մինչ այնուհետև առհասարակ սկիզբն արարին ակնկառոյց լինել՝ ի կատուն, և դիտել՝ ի նմա զոյն իսկ՝ յոր սակս էր ցայն վայր արհամարհ, զանպատճոյ պարծուն նորա, վշամեստուն և զվե՛հանձնուն, որով առաւե՛լոյր՝ ընդ ամ՝ արտաքին պերճուն՝ ի՛ ընդ այն առաւել քան զմ զարմացեալ էին, զի տեսանէին յեզանակ վարելոյ պոմպէոսի ընդ նմա առաւել պատկառանս, քան բարեկամուն։ Կուէր թէ՝ հա՛ն էր ընդ եկաւորութե՛ նդ, բայց ըղձանայր՝ թէ իցե՛ ի բացեայ։ Օ՛ զ թէպէտ առ իւր կալեալ էր զոյլ՝ ամ նորահաս հռովմայեցիս եկեալս յողջոյն նդ, և բռնադատեալ զնո երեկօթս առնել առ նմ աւուրս քանի մի, չարար կատուն առաջարկուն այդպիսի, իբրև զի ծանր էր նմ այդպիսի հրաւէր. զի մի կարծեսցի թէ իւր առաջի՝ իշխանաւոր իցէ գերագոյ և անկախ։ Այլև կատուն միայն եղև՝ ի ձանապարհորդելոյն՝ ի հռովմ, որուա՛ պոմպէոս չանձն արար զնւր իւր և զորդիս՝ որոյ էր իսկ ազգական։ Յայնմ օրէ և առ յապայ ջանային առնելքին գրգռանօք ունիլ զկատուն։ Արաղաքէ և առանձնաւորք առնէին նմա մի՛ զմ մեծարանս. իւրաքանչիւր ոք կամէր լնե՛վանեցուցանել զնա՛ ի տուն իւր. իւրաքանչիւր ոք հրաւիրէր զնա՛ ի ձաշ։ Բայց ո՛չ այս մեծարանք, և ո՛չ գրգռանք ասիոյ զօրեցին զառածանել զնա։ Ցարաւ ողջիկ անդրէն՝ ի հռովմ զնստուե՛ իւրոց առաքինուե՛ց։

Ասացի իսկ թէ դէպ տարուս արքայ աղաչէր զնա մեծա-

1 Ջայս գործ լե՛ մարի արքանել առ ձամանակա՝ յորում էին պոմպէոս յերէն առոյնք խաղաղացուցանելոյ զարեւելս առ հասարակ։ Եւ ո՛չ ինչ պոմպէոսի ն ի՛ գործի հնար էր պատահել իրերաց յերէն ասս, բայց երե՛ ի ձամանակի անդ պատերազմի ձովամարքի հինիցն, և ինչ՛ ի պահու անդ՝ որ չէր պատերազմ, և ներելոյ պոմպէոսի խաղալ գնալ՝ ի վերայ միջերկրական։

րեալ զինքն եկաւորուբք յայլ իւր : Այնժամ իշխանին : Եւ ես Ա. Ա. 687 : Ն. Ք. 65 :
հասանել ըն նմա սերտ բարեկամուբ , և ապահովել հզօր
խնամակալու տումի իւրոյ և որդւոց իւրոց : Կատունի զի- Դիմաստրո-
ջեր՝ի կաս նը , չաքաւ յայլ : Այլ իբրև կամ եղև դեմ- ան անհաւ-
տարոսի մատուցանել նմա ընծայս ինչ , և՝ի թախանձել լենի հանդ
զնա առ ընդունելուբ , խստակրօն հռովմայեցին այնպես դեպ զնա յընդ-
զժկամակ գտաւ , որ գոլով ընդ երեկս հասեալ անդր , ունելութեն
անցուցեալ զգիշերն՝ի տան իւրոյ ասպնջականի , եւ իւրոց ընծայ-
զնաց առաւօտուն՝ զերծրդ ժամաւ տուընջեան : Դիմ- ից :
տարոս յայս սակս չերձև յուսաբեկ . և՝ի հասանել կա-
տունի՝ի պեսսինոն , եգիտ յղեալ առ ինքն նոր պարգևս ,
և հրովարտակ մի գրեալ յիշխանէն՝ որ երդմնեցուցաներ
զնա , կամ ընդունել , և կամ գեթ Թողացուցանել իւ-
րոց բարեկամաց՝ բաշխել յիւրեանս : Վասն բարեխոսպ
ասէ յիւրում գրի վայէլէ օգնել պատուով՝ յոր վայելէն ընդ ինդ
դուբ . և ոչ բնաւ չէ շատ ունի՝ զոհատրել նոցա զարգանն : Կարե-
կամաց կատունի եղև փորձուի , այլ ինքն եկաց անխոնարհ
հելի , և առաքեաց յետս զընծայն՝ ասելով . ոչ պա-
կասին երբեք պատճառանք , յորժամ կամք իցեն վաւեր
բացուցանել զընդունելուի պարգևաց՝ որք ընուն զցանս
կուին . և ես բաժանորդս արարից զնմ բարեկամս այնմ՝
զոր ստացեալ ունիմ , կի զոր ստացայց՝ օրինաւոր և հա-
մեստ միջոցաբ :

Յետ այց առնելոյ բովանդակ ասիոյ և երկրին ասոր- Պատրաստի
ւոց կատուն՝ գարձաւ՝ի Հռովմ. և անդէն ձեռն էարկ պա- ի խնդրել
բասիլ կէս մի յուսուսն՝ի սենեկի ընդ ստոյիկեանն ա- զգանձաւո-
Թենոդորոսի , և կէս մի՝ յիրոզուհիս իւրոյ բարեկամոյ՝ի րուեն :
հրապարակի , մինչև հաստատեալ՝ի միաս խնդրել զգան-
ձաւորուեն : Ցետսաբ , զի՞նչ օրինակ ետ կատուն արիքեան
զօրականաց՝ նորահաս սպային . և արդ տեսցուբ , զի գա-
զափար լենի նորահաս իշխանաւորայն : Յառաջ ըն զմուտս
յընթացակցուի առ անուանիլ գանձաւոր , ուշ եդ ու-
սանիլ՝ի հիմանոյ զպարտաւորուիս և զիրաւունս պաշտա-
մանն՝ որում անձկայր : Ասաւ զօրինս՝ որոց էր յարաբե-
րուի ինչ ըն այն : Խորհեցաւ ըն այնոսիկ՝ որք էին յայնմ
հմուտ և փորձ : Ի վախճան ոմի ուսաւ անվնաբ՝ որ ինչ
անկ էր այսմ իշխանաւորուե : Այսպ իբրև եհմուտ յայն ,
արար փոփոխուի մեծ՝ի ստորադասս՝ որոց՝ի ձեռս էր ա-

1 Ըստ ասից պղտոբտուսի՝ ձերբազեալ չեպ այսորիկ՝ այլես ամ գերի գտան և
էր յայնժամ գեյոդորոս , որոմ անհնար հինգ , անմարի էր նմա լինել յայնժամ
է ձմարթիլ , բայց բազագտուբ և էին անցեալ ջառասրբէ :
ատ խոտանիս : Վէ զի ինչաւ իշխանիս

Ա՛ Հ. 687։
Ն. Ք. 65։

տեան գանձաւորութեան, և մանաւանդ՝ի գալիս։

Դանձաւոր լեալ՝ կարգագրէ եբգ գաստացուցանել զբերս։

Ա՛յս սպաւք՝ որք ցմահ ծառայեին, և ընդ որոց ձեռս անցանէին միշտ հասարակաց գիւանագրութիք, և ամ իրազիք, սպասաւորելով ընդ ձեռամբ նորահաս իշխանաւորաց, (որք յոլովակի առ անհմտութե իբեանց՝ պետս ունէին վարժապետաց և ուսուցչաց,) ձեռանային երեւելիք ոմանք։ Որք փոխանակ հպատակելոյ ոմն պարտ էր՝ հրամանաց գանձաւորաց, ձեռներեց լինէին առաջնորդել նոյ, ոմ թէ ինքեանք էին իշխանաւորք։ Ա՛տոն՝ որ ոչ յանձին բերէր զայսր պաշտամանն զանուն միայն և զտիտղոս, այլև զբաւականսն և զկմտութե, ուստոյ այսպիսի յանդուգն գալոյ զիւրեանց պարտաւորութ. և գարձոյց զնա կալ՝ի սահմանն գործաւորուելոյ հասարակ սպասից, որոց պարտ էր կատարել զհրամանս իւրեանց վերնագունից։ Ո՛ւ վեց եկին տոքա. և քծնել զայլովք գանձաւորօք, միաբանեցան ամենեքին ընդդէմ կատանի միայնոյ։ Ո՛ւայց նէ՛ի չայտ բերեալ զոմանց խարդախսն, և ցուցեալ զայլոց անգիտուն, ստիպեաց զամենեսին զնա տալ տեղի։ Ո՛ւռաջի արարեալ և քանի մի օրինակ երկուց՝ի նոցանէ՝ որք մեզապարտ գտան չարաչար մատակարարութ, և վիւր անպատուելին՝ զորոյ յիշատակեցաք զպիարդն առ կատուրսիս, խմացոյց՝ թէ չիք ակնկալել ամենևին առ՝ի նմանէ հատանութե։ Ո՛չ ասս օրինակաւ կատոն հասատատեաց անդրէն զկարգ. դարձոյց յինքն և յիւր պաշտօնակիցս զպէսպէս ժառանգակալութե ամ իրաւանց՝ որք հասանէին իւրեանց պաշտամանն. և չետ այսպիսի նորոգութեան արար զատեան դանձաւորութե և վճեմական քան զնոսն ինքն ծերակոյսն. մինչև ամենեսեան առ հասարակ ասել, թէ կատոն բարձրացոյց զդանձաւորութե քան զպետիս հիւպատոսութե։

Երեւի արգաբակորով՝ի վճարս, այլ լուրջ ըդեմ խարդախութեց, և հանապազորդել յամ գործաւորուիս իւրոց պաշտամանն։

Դանձաւորք ունէին զպահպանութե գանձատան, և զմատակարարուելն հասարակաց փողոց։ Ա՛տոն ետես՝ զի կային հին պարտք անվճարք, եթէ հասարակապետութե առ առանձնատոս, և եթէ առանձնատոսք առ հասարակապետութե։ Ա՛բարձ զայս անկարգուի։ Ո՛չ կամեցաւ ոչ զզրկել պետութեն, և ոչ զզրկիլ, կամեցաւ զի չդիւրք վճարեսցեն պարտատուքն։ Ո՛ չարեաց ը փոյթ և կամաւորութ զպարտս (պետուե)։ մինչև զարմանալ ամ ժողովրդեանն, և պատկառիլ յիշխանաւորութե՝ որ գիտեր չնչել զպարտսն, և ոչ գիտեր՝ զի՞նչ իցէ՝ի չտեսս լինել. որ ստիպեր՝ի հատուցումն զայնոսիկ՝ որոց՝ի մոլ

եդեալ էր առ իւրեանս ունել. և հատուցանէր այնմ՝որք այլ ոչ ակն ունէին ընդունիլ։ Ա. Հ. 687։ Ն. Ք. 65։

Պատանեալքը տնօրինեին զփոյթս եւ վճռոց հիւպատոսաց և ծերակուտին ։ Այլ քաջքն անգամ սպրդէին մտանէին խաբէութիւք , յորոց վէր իւրեանց նախորդք՝ շահեալք ՚ի թախանձանաց և ՚ի բանսարկուեց , խնդրէին զաւատն ոչ իւիք իրօք տարաբ յայսպիսի դէպս. և եղև այն պէս խղճահար , մինչև յաւուր միում իբրև առաջի արուբինն նիՓ զվճիռ ինչ՝ յոյր վէր ունէր ինչ երկբայուի , թէ. պէտ և բազումք վկայէին վաւերականութեն , ոչ կամեցաւ զօրինակն անցուցանել յիւր դիւանագիր , թէ ոչ հիւպատոսք անձամբ գայցեն ծանօթս տալ և ստուգել զայն երդմամբ ։

Ինչ մի հաճոյ եղև յոյժ ժողովրդեանն ։ Յո՛ի գուբ տալ՝ որչափ ինչ առեալ էին այն չարաշուք մարդասիրողքն, որոց նշանակեալ էին ՚ի սիղլայէ երևելի ընտրհաւաքութեք ՚ի հասարակաց գանձուէ՝ վ՚որ սպանանելոյ նոքա զատ բազբեալը ։ Կարշելի էին սոքա յաչս ամ աշխարհի . քայց կատոն միայն իշխեաց ընդհարկանիլ ընդ նոսա , և կորզել ՚ի ձեռաց նոցա զանագորուն Թոշակն՝ զոր ընկալեալ էր նոցա , ՚ի դէմս ածեալ միանգամայն զամ արհաւիրս և զդժնդակութիս սպիրատուէ նոցա ։

Ազատանայաւ և մեծամեծ գովութիՓ վ՚որ իւրոյ անխոնջ հանապազորդուէ , և անվերնպ կատարման ամի՝ որ հայէր ՚ի գործաւորութիս իւրոյ պաշտաման ։ Ոչ ոք ՚ի պաշտօնակցաց նոր կանխեաց երբեք յառաջ քան զնա յատեան . և ոչ ոք եզ անտի յետոյ քան զնա ։ Ոչ պակասեաց ՚ի ժողովոյ ինչ ժողովրդեան կամ ծերակուտին , առ զուսպ ունելոյ զայնոսիկ՝ որք անզգայ վիճմամբ առնէին պարգևս ՚ի հարկաց փողոց , և որք յոլովակի յորդորեալք ՚ի կուսակցուէ՝ առնէին կամ շնորհաբաշխուիս , և կամ վմանն ինչ Թողացուցանէին ՚ի փողոյն՝ որ պետուէն էր անկ ։ Այս պիսի մտածութեանն գնացիւք կատոն ՚ի քաց արարեալ՝ ասաի զխարդաւանողս , և զայնոսիկ՝ որոց արուեստ է , նեղել զքաղքացիս տարապարտ տուգանօք և վիճիւք ՚ի շահ գանձուն հասարակաց , և անտի ընուլ զարծաթ ՚ի գանձս բանս հասարակապետուէ , եցոյց՝ Թէ պետուէն հնար է լինել փարթամ առանց ինչ անիրաւելոյ առ առանձնաւորս ։

Համարուն իւրոց պաշտօնակցաց ըզնմանէ ։

՚Ի սկզբան անդ անսչառուի իւր և խստութիՓ էր ինչ հաճոյ իւրոց պաշաօնակցաց ։ Այլ զկնի հաճ և հաւան գտան ՚ի դիմադրել զանուն նր՝ ամ անիրաւ թախանձա-

Ա. Ջ. 687։ Ն. Ք. 65։

նաց՝ յորոց տապնակ էր նոյ զերծանիլ։ Կատոն՝ի չքմեղս հանէը զնո. և ինքն յոժարամիտ լիւր վէր ըստանձնել զնմ զխոժոռուհին ը դիմադարձուի նոյ։

Նշանաւոր սոյց իւրոյ քաջասրտու. թե առ մի՝ի նոցանէ։

Ի վերջնում աւուր իշխանաւորուե իւրոյ, իբրև յու. զարկեցաւ նա՝ի տուն իւր՝ պոգցես ամ քաղաքացվով, աղգ եղև նմա՝ թէ մարկեղոս պաշտօնակից իւր ծնացեը յատենի գանձաւորաց, էր ոմգ թէ պաշարեալ՝ի զօրաւոր անձանց՝ որք կամէին ընդունիլ, մանաւանդ թէ բռնի կորզել չնորհաբաշխուԹի ինչ անբանաւոր և անիրաւ։ Մարկեղոս բարեկամ էր կատոնի անդատին՝ի մանկուէ. էր այր բարեխորհ, բայց տկար և անձեռնհաս ընդդէմ գանձողոյ ազաչանաց և Թախանձանաց։ Կատոն գառնացոյց յատեան. և գաւեալ վիրան եղեալ, և՝ի գիր անցու. ցեալ և ատրագրեալ՝ խնդրեաց վգիրն. ջնջեաց գայն առաջի իսկ մարկեղոսի. և նա չասաց ամենևին ինչ։ Յետ այսորիկ տարաւ վնա չիւր տուն, և մարկեղոս քաջ ծանեաւ՝ թէ կատոնի էին իրաւունք. վը որոյ և չարար երբեք զայնմանէ գանգատ կմ յանդիմանուի ինչ, և եղև նը բարեկամ իբրև զաւագինն։

Չաւատասրմուի իւր՝ի ընուէ զպարտաւորուհս սինկ. զիտիկոսի եղև կարի ինն զարմանալի։ Իր առաջին՝ի մտանել՝ի ծերակոյտն, և եր վերջին յեղանել անտի։ Նա վն անցաներ հասարակօրէն հարուստ ժամանակ, մինչև ընկերուհն քոլորեսցի, բերէր նա ը իւր գիրս ինչ, և կարդայր մինչև՝ի սկիզբն կշռուե։ Ոչ մեկնեցաւ եր. բեք՝ի քղքէն՝ յաւուրս ժողովէլոյ ծերակուտին։ Պոմ. պէոսի գտեալ վնա միշտ իւր խոչ ընդ ոտն, հնարեցաւ յանձնել՝ի նա պէսպէս իրողուես՝ ՝ի ստիպել վնա եր. բեմն գտանիլ բացական։ Կատոն ծանեաւ վսղվաղակի զհնարսն. և հաստատեաց նախամեծար ընտրել զհանա. պազրդեն՝ի ծերակոյտն, ը զոյլ զբաղանս։ Օն՝ ո.

Հաւատարմուի իւր՝ի ընուէ զպարտաւորուհս սինկ. զիտիկոսի։

1 Օն որովհետև չէր նը բերեալ թէ, ոչ՝ի սակս վատաց և ագա. յատաչտորդուհ հասարակապետուս. հուե, ոչ վայրապար և ը գեպաց

բովէհաւ ոչ սեր փառաց , ոչ անձին օգուտ , և ոչ բեռ Ա. Հ. 687։
բուման ինչ դիպուածոց՝ ոմն այլոց բաշխմայ պատահէ , արդ Ն. Ք. 65։
զնա ՚ի մատակարարուէ հասարակաց իրողութեց , այլ
յանձնառու էր այնմ՝ սկզբամբ , ՚ի մտի եդեալ թէ պարտ
է քո՛ քաջասէր իւրովի բերել առ իւր հայրենիս . վա՛ այսո-
րիկ պարտ անձին վարկաներ երկասիրել ՚ի հնոց և ՚ի
շահ պետուէն՝ առաւել և այլ ուշի ուշով ՚ք զերկասիրել
մեզուն վա՛ իւրոյ փեթակի : Ոչ շատացեալ առարկայիւք
և իրողութ՛ք զորս ուներ ակն յանդիման , ձգեր զինեամ
իւր և զաբնուէն ՚ի գաւառս գաւառս : Իրազեկ լիներ
այնմ՝ ոմն՝ որ յայնս գործիւր , վճռող , դատաստանաց ,
երևելի պատահարաց , և որոց մարթ եր ունել ինչ հե-
տաքրքիր . և զայսր՝ ամի առնոյր զտեղեկուէն յասպնջակա-
նաց և ՚ի բարեկամաց՝ զորս ուներ ՚ի պէսպէս վայրս ինք-
նակալուէն :

Հոչակ իւրոյ մեծարոյուէն։

Յայսիսի՝ մամանք անթերի գնայք՝ ստացան նմ սքանչելի համբաւ : Իւր անուն յիշատակիւր իբրև զբուն առաքինուէն անուն : Ոչ ՚ի փաստաբանից յատենաբա-
նել իւրում երբեմն , ասէ : ,, Ոչ ՚ի միայն վկայ՝ թէպէտ
,, և կատուն իւր , չէ՛ բաւական զօրայուսանել զդատաս-
,, տան ինչ ,, : Ոչ ծերակուտին ՚ի խորհիլ ուրումն՝ որ մե-
ծին եր և խառնագնաց ներքոյեան յօրինել խոշորակե-
պուէ և բարեխառնուէն , ասացաւ առ նա : Ո՞ երդուիլ էիր
գանդաւածել , ըե՛ զոր ճոխ էս իբրև զիբաւսոս , և չէաս որպէս
լուսաբերն , խօսէիս իբր զիպատան :

Ընդհատ խոստուէն՝ որով զարձոյց կատուն յետս ՚ի
սպանողացն տարապրելոց՝ զշաշիւն զոր ընկալեալ եր նմ
՚ի հասարակաց գանձուէ , եբաց ձանապարհ կեսարու զա-
տապարտել զնոր ոմն մարդասպանս : Ընդ այս է թերևս
մի միայն առիթն հասարակաց իրողութե , յոր կատուն և
կեսար միաբան զտան ՚ի կարծիս : Ընդ զատապարտու-
թիք անկ են տարբերն՝ յորում Ընկ կեսար , և փիգուրոս
եղեն հիւպատոսք :

Ընդմ հիւպատոսուէ տորկուատոսի և կոտտասայ՝ է
նշանաւոր վա՛ ծննդեան ովրատիոսի բանաստեղծի :

որպէս այլք ոմանք , այլ՝ զայն մա- սարակաւորութե պնդագոյն և
տակարարուէ ընտրեալ նորա որպա- քանիւ՝ քան զնորս իւրումն փե-
զպաշտօն ինչ առն բարւոյ , ՚ի դէպ թակի :
համարեր անձին փոյթ ունել հա-

Ա. Հ. 688։
Ն. Ք. 64։

Ե ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ։
Ե ՄԱՐԿԻՈՍ ՓԻԳՈՒԼՈՍ։

Կեսար գա-
տապարտե-
ալ մարգա-
պանա՝ զսպա-
նդու տարա-
գրելոյց։
Դիոն. լԷ։
Սուետոնիոս՝ ի
կեսար. ԻԱ։
Կիւ. ,Օլոց
ապիա՞. Եանդ
Ալեքսիոս։
* Լատ. Եռա-
գեօ գոեռ-
չիօնիս։

Կեսար ընդ ելանելն ՚ի շինուածապետուէ , իբրև եղև առանձնաւոր ոք , յանձն եղև նմա գտեալ գտաստան սպանուեց ։ Ա՚ն որդ եղև այն , զոր հռովմայեցիք կոչէին՝ * պոպաոր կոյցոպոբյէ · ՚ի՞ է՝ հոգաբարձու կայսերէ բար-ձեր լինել փոխանակ պրետորի ՚ի գատաստան գտից յանցաւորուեց եղելոյց ՚ի բաշխի ուրեք ։ Ա՚ն Թուի , ՚ի ներքս մուծեալ պաշտն այսպիսի , վն ՚ի ներքս փակելոյ ՚ի գատ և ՚ի պատուհաս անդր զանսոսիկ՝ որոց սպանեալ էր զծարագրեալս , Թէպէտ և յանուանէ քացաւուէ էր զնացանէ օրինօք սիլլայի ։ Ա աղու և գտանէր զնա ՚ի-րաց ինչ գատապարտեալս ՚ի կատուել . և այն ինչ վարիչն աճէին զնա յիւր ատեան , չամձեր զիտաս ժողովրդեանն , տալով նմ տեսանել զայն չարագործ պատուհասեալս զն նոյն իսկ յանցանաց , որոց զն յառաջագոյն վարձս ընկալան . և յեղափոխուէ վճռակի Թշուառականացս՝ ինդու-Թէ եղև բոլորեցունց ։ Համարէին զդատապարտուԹէն նմ գործ՝ որ իսպառ անհետ առնէր զբռնաւորուԹէն , և վրէժխնդրուԹէն ինչ ՚ի սիլլայէ ՚ի պաշտօնեայս իւրոյ ան-գԹուԹէ ։

Կատիլինա
սրձակի ։

՚Ի դատապարտեալս անդ արժան է յիշատակել զՀա-բիւրապետն ոմն՝ Ի . լուսկիոս անուն , որ այնպէս մեծա-Հարուստ ձնհայեցէ էր յաղԹուէ սիլլայի , մինչև ընչից նր Հասանել չատոն միլիոն սեստերաս , (որ առնէ 1250 Հիր-լիոյ գաղղիական ։) Ի՚նչ լիներն Հօրէղբայր (կամ քե-ռի) կատիլինայ , որոյ սպանեալ էր զլուսկրետիոս ։ ոիեէ-լա , և սա ևս գատապարտեցաւ ։ Ի՚այց կատիլինա մեղա-պարտագոյնն քան զամենեսին՝ ամբաստանեալ՝ սրձակ-կեցաւ ։ Պատմիչք ընդհանրակեն զսպատճառ անկուգական դատաստանացս ՚ի զուգական դատս։ Ա՚ր Թէ Հաստատեալ Թէ կեսար ՝ կարի իսն բարեկամ գոլով կատիլինայ , ՚ի կամեցաւ Թէ կորնչել ։ Ա՚ն գատաստանիս այսորիկ կա-տիլինա՝ այլ լի յանդուգնուԹեամբ , և պարտաւոր ևս ահեղ գաւազդուէ , երկիւղ ամբաստանեալ ՚ի ծանր ծանր նիւ-Թս և միշտ արձակեալ՝ վՀեղապարտուԹէն զնչրև ու-նելով , գտաւ ՚ի սահման Հետամուտ լինելոյ Հիւպատա-սուԹէ ։

1 Յայսմ վէրք երիամ ասկնիոսի ։ սպանեալ յեռամբ հարիւրապետի ոմ Պլոտարքոս ասէ զնտիբեթիոս ոիեէա՝ բոմն ։

Ակ Հ. 688։ Ն. Ք. 64։

Կիկերոն որ պատրաստիւը ՚ի նախընթաց տարւէ խընդրել յայսմ ամի զնոյն պաշտօն, իբրև եաես վկատիլինա ամբաստանեալ վկեղբանայ՝ ասաց. ,,լեսլի իմ խնդրս,, զակից, եթէ համաձեսլի, թէ ՚ի միջօրեի՝ չլինիցի ,,տիւ,,։ Լսվև դատաստան, և կատիլինա արձակեցաւ։ Այ՝ իբրև երևեցաւ զկնի միւսանգամ ամբաստանեալ՝ կամ զի յայսմ յեանուար նուազի բանն էր զկուսապղծու. թէ ը վեստեանն փաբիայ, կամ ոչ հաւանականագոյն թուի՝ զսպանուէ տարագրելոյ, դիմեաց առ նոյն ինքն կիկերոն՝ ալաչել զնա, զի լեսլի իւր պաշտպան։ Ձկիք դիտեալ ստուգիւ. արդեօք կիկերոն լեալ էսլ փաստա. բան յայսմիսի ահիրաւ դատ։ Ա. յս ինչ ստոյգ է, թէ չերևեր ինչ կարի բացական. զմնաւ ածեալ այսմիսի ինչ։ Սակս ընկալայդ զը նը աչեսոդը, և յայնմ պահու կարծա. ցայդ վասին լինել՚է ղեծ ինչ համահամաը՚է ղնջ նը և եմ՚է խնդիր հետապատասխանեան. և նմա դատապարտ լեալ, և ես մեղաւորեցայդ ընդ այն։

Աւետեաց Ա. Բաղ. ագիր՝։

Կիկերոն և կատիլինա էին երկու երևելագոյնք ՚ի ըս. պիտակազգեստս. առաջինն՝ վն իւրոց արգեանց. երկ. բորդն՝ վն իւրոյ տոհմի, ունելով և ոգի ինչ քանսարկու. և յանդուգն։ Այսին նոյ հինգ ևս խնդրողակիցք. գալբա պատրիկ և այլ բարեկիր, բայց անձեռնհաս ՚ի գործ։ Ա. անտոնիոս որդի ատենաբանին մարկոսի անտոնիոսի։ Լ. կասսիոս, որ ՚ի յաջորդ ամի դատակից եղև կատիլի. նայ. և այլ երկուք՝ որոց անուն չէ ինչ երևելի ՚ի պատ. միւե։ Ընդհէն վաղվաղակի երևեցաւ, թէ անմարթ եր լինել ընտրուեն՝ բայց ՚ի մէջ կիկերոնի, կատիլինայ և անտոնիոսի։ Այս երկոքին յետինքս ուխելով գկրասոս և գկեսար՝ ընկերացան միաւանց, և միաբա. նեցին զիւրեանց կողմնակս՝ յետս ընկրկել զայն ակնեղ ընթացակիցս, և ապահովել անձանց զհիւպատոսուէնն։ Վաղանի հետապնդուի նոյ եղև այնպիսի ամբարատա. նուէ և ժպրհուէ, մինչև բարեկիր արք քաղաքին համակ ծանրացաւսան եղեն։ Ծերակոյան ըղձանայր կարգել նոր օրէն ընդեմ գաղանի հետապնդուե, և կամէր առաւե լուլ զիաստուե պատժոյ եգելոյ ՚ի նախընթաց օրինաց։ Այլ մի ՚ի տրիբունից Լ. մուկիոս անուն՝ ընդեմ եկաց։ ՚Ի բարկուե անդ՝ զոր այնպիսի դիմադրուե արկ ՚ի սիրտ ամ ծերունեաց, յոտն եկաց կիկերոն՝ սաստիւ կշտամ. բեալ զկատիլինա և զանտոնիոս։ Ձկայ առ մեզ ողջիկ այս Ճառ. մնայլին միայն կոտրակք ինչ հասուցեալք ՚ի մեզ ՚յասկոնիոսէ պեդիանոսէ։

Խնդրէ ըզ. հիւպատոսուէ թէ ընկե. րոնի, և ընդ այլ հինգ ըս. պիտակազ. գեստս։ Ասկոն։

ԱՃ Ա. 688։ Ե. Ք. 64։

Կաթուլիկոս միտ գնէ յաւագ տանէզլոյ վեր. հռոմ. դաւադրուէ։ Սալաստիոս։ Պետ։ Կին։

Յայսմ վայրի կաթուլիկոս միտ դնէր՝ի ծածուկ յառաջ վարել զհռոմէական իւրոյ դաւադրուէ։ Զի թէպէն Թուեցաւ նմ դիպող յոյժ։ Պոմպէոս եր յարևելս հզօր գօրու Թիւ ինքնակալուէ։ Յիտալիա չկայր ինչ զոր երևելի յոտին։ Զպա եթէ կարողանայր հիւպատոս լինել ընտանիոսի՝ ոչ միայն ունէր, համարեր զանձն այնուհետև ինքնիշխան ևս լինել հասարակապետուէ։ Իսկ զի անտոնիոս Թէպետև չէր ոք կարի լիմն յառաջադէմ՝ի չարուէ, բայց միեր յայնց՝ որոց առ տկարուէ հնար եր զառածանիլ՝ի մեծամեծ ապիրատուէիս։ Յարտամ գոլով իւրովի առ մոլուէ և առ առաքինուէ, և զնաւորել առ՝ի կառավարել, իւր բարի կամ չար գնայք կախեալ կային գհռովին զայնցանէ՝ որք գիտեին տիրել սրտի նր։ Վասն այսորիկ յիրաւի եր կաթիլինայ ակն ունել, Թէ գտանիցէ յէ յայսպիսի պաշտօնակից իւր գործի դիւրապատրաստ՝ ևս իւրոյ խորհրդոց։

Չանրական տրամադրուէ իրողուէից հռովմայ և իտալիոյ տայր նմա ոչ փոքր յոյս։ Զի հասարակ ապականուեի բարուց՝ զոր գՀետ սալուստիոսի նկարագրեցաք, գիտացոյց զանհնարին առաւելուէի պատահաց։ Վասն որ քիքաջիք էին մանկայեալք անմիտ ծախիւք, չինուէք մեծագործ Թատրոնաց, խրախճանուէք հանդերձելովք ժողովրդեան, առատաձեռնուէք եղելովք՝ի գնել ըզքուեայս. և բովանդակ փողն եր անցեալ՝ի ձեռս ապատոհմից՝ որք էին ինչ ազնուամիտ նախանձախնդիր՝ի ծառայուէ պետուէիս։ Օրրականք սիլլայի՝ որք վանեալ էին չաւյալուէիք, որչափ ինչ ստացեալ ունէին բռնուէք, անձկային միաւանդամ քաղաքական պտղոյ։ Իւս և այգ մարդկան՝ ամենևին յայլազգ վիճակի, քան է՝ որք կործանեցան յաղԹուէիք սիլլայի, անձկային և աք փոփոխուէ, վն հաստատեցին անդրէն յիրեանց բարօրուէիս։ Կասկածեցեալ էր յԻնքն զամ գործս քաղքին։ Սալաստիոս։

Կին. ըե մաքրեաց. համար 49։

Յանկուցեալ էր յինքն զամ գործս քաղքին։ Սալաստիոս։

Ի՞ վի՞ի բազում ժամանակաց հետէ գՀետ էր ժողովելոյ վիւրև զամ չարագործս քղքին, և մեք տեսաք՝ քանիմ առաւելեալ եր նոքա Թիւ։ Զմենեքին նոքա՝ որք ամենայարատ անկարգուէք վանեալ էին իսպառ վիւրեանց ինչս. ամենեքին որք անկեալ էին ընդ մեծամեծ պարտեաք՝ գի վերծգին՝ի խստուէ գատաստանայ. Հայրասպանք, սեղանագերծք, գատապարտք վե գործեալ յանցանաց, կամ որոց յիրաւի եր գատապարտիլ, որոց

Ա. Հ. 688։
Ն. Ք. 64։

կեանք էին սպանուիք և ստերդմուիք. և պարզաբար՝ ա-
մենեքին նոքա՝ որոց յոխուն, Թշուառութի, կամ մոռա-
տանջ խիղճ Թշնամի արարեալ էին զնա հանդարտութե
և հանգստեան, էին անձինք՝ որք ԹարԹափէին զկատի-
լինալիս, և նա Թևակոխեր առնել՝ ի նոցանէ իւր բարե-
կամս և մտերիմս։

Ամուսնաք իւր՝ ի մոլո-
ըեցուցանել զմանկտին։

Իսկ ուրեք երբեք պատահէր բարեկամանալ ընդ նմա
ուրուք՝ որ չէր զեղծ բարուք, անդէն վաղվաղակի զնա
նուի զգենոյր զայլոյ՝ օր ըօրէ ընտանուիք ընդ այնչափ
չարաբարոյս, և բնութիք հրապուրանաց։ Ալատիլինայ
փոյԹ էր մանաւորապէս որսալ զնորահասս, որոց դեռ
տակաւ գոլով ոգի, և զնա տիոյն դիւրընկալ ամ տպաւո-
րուեց, հեշտեաւ ըմբռնեալ լինէին՝ ի ծողակսն իր։ Ա՛ն
այսորիկ ըօ բնաւոր յօժարուէ՝ զոր աեսանէր յիւրաքան-
չիւրոք, ձեռն կարկաուէր նոցա յանառակ հաճոյս իւ-
րեանց։ Ալմանոյ դնէր սկզնդս և ձիս. միով բանիւ,
վատնէր զամ էԹէ զարծաԹ, և էԹէ զամԹխաճուի,
միայն Թէ արասցէ զնա հլուս իւրոյ կամաց, և հաւատա-
րիմ առ իւր օգուտ։

Ալբև այսպէս խայծ՝ ի քերան ագկանէր նմ, ընտելա-
ցուցանէր զնա՝ ի գործել զգժնդակ ոձիրս. տայր սուտ
վկայել՝ ի նպաստ իւրոյ բարեկամոյ, և սուտ գիր հա-
նել։ Ալսոցայնքեր նմ չհամարիլ լինէ՝ ոչ զպատիւ, ոչ զո-
րէնս, ոչ զիւրեանց բարի անուն և ոչ զսաղդ, և չզան-
գիտել յերկիւղէ վտանգի։ Ա՛պա փոքր փոքր յաւուջ
խաղացեալ՝ իբրև բռտացուցանէր զնոսա և հաստահիմն
պնդէր՝ ի չարիս, պակէր զայս չարաշուք մնուդ, ընտե-
լացուցեալ զնա՝ ի հեղուլ զարիւն. և Թէ չկայր առ օրին
ոք՝ զոր սպանցեն, տայր նմ սպանանել անխտիր զայնո-
սիկ՝ զորս՝ ի դէպ համարէր, առանց խոյզ և խնդիր առ-
նելոյ՝ Թէ կայրն իւր իրաւունք առելոյ զնա, և Թէ ոչ.
միայն Թէ սպանցեն՝ զի մի խամրասցին լսազուկք նոցա և
ժպրհուն առ՝ ի չգոյէ վարժուե։

Ա՝խեցայ ես՝ ի ձառս այսց սարսափելի մանրամասնու-
Թեց, զի չգտանեմ այլ օրինակ յանկագոյն՝ առ ուսու-
ցանել նորահասից, քանի զգուշանալ ունիցին՝ ի չար
ընկերուԹենէ. և քանի խայծ հաճոյիցն՝ որ առ երեսս է
քաղցր, վաղ յափշտակիցէ զայնոսիկ՝ որք անճնաւորք
լինին՝ ի վիհս քստմնելի յանցուածոց։

1 Ա՛ւաւել իմն՝ ի խնդիր էր մանկագունիցն ընտանուե։ Սկզբ առց կակուղք և առ սիոյն յեղե-
զուկն՝ հեշտեաւ ըմբռնէին՝ ի պատ բանաց։

,, պատճառ լինել այսչափ ծախուց ,, ։ Լուկուլլոս ժըպտ-
տելով ետ պատասխանի ։ Ձայս ոչ իցեաւ՝ ե՛ն ինչ որ լինի
վ՛ն չեր, քայց վեց տասն լինի վ՛ն լուկուլլոսի ։

Ո՛ր մի՝ յորում ուտէր առանձինն, և արկին նմ՛ ընթ-
րիս միջասահման, բարկացաւ. և կշտամբեաց զտաճա-
րապետ իւր ։ Իրև ի չքմեղս եղև՝ ասելով, քանզի
չկայր ոք ի կոչնականաց, Թուեցաւ՝ թէ չիցեն պէտք մե-
ծապատրաստ ընթրեաց. անդրէն բարկացեալ ետ պա-
տասխանի. չգիտիցե՞ք դուք, չի այսօր լուկուլլոս ընթրէ ի տան
լուկուլլոսի ։

Ի՛սկ ինչ ոչ խօսէին ի հռոմ, քայց զկոչնոյ լուկուլ-
լոսի ։ Կիկերոնի և պոմպէոսի կամք եղեն անձամբք
ձկդրտել ։ Ի՛պա գտեր զնա ի հրապարակի՝ ասեն ։ Այսքիչ
է մեզ այսօր ընթրել ընդ ձեզ. քայց ոչ կամիմ ըե դեղս առաջի

1 Ընթրիք լուկուլլոսի առօրեայ՝ որ նախանձելի առներ ասիայնոց
էին ըստ նորոգ ճոխացելոցն . . . զանձն։ Պլուտ. ի լուկուլլոս ։

ինչ առեալ չան պահեսկանդ : Լուկուլլոս զառաջինն ժբլա- Ա՛ Հ. 689 :
տեաց զայրն . և աղաչեաց զնա արկանել յայլ օր , զի նկե Ն. Ք. 63 :
ժամանակ պատրաստելոյ ինչ առ արժանաւոր ընդունե-
լութի նոյ : Ա՛յլ նոքա պնդեցին , և՛ նոյն չոքան ընդ նմա՛ի
տուն նորա , և չկրկեցուցին զնա յաչաց , առ երկիւղի՛
գուցէ տապէ ինչ պատուէր իւրոյ ընտանեաց : Ա՛սաց
միայն Թոյլտուուքը նոյ և առաջի իսկ նոյ իւրում տաճա-
րապետի , թէ կամիմ ընթրել՛ի դահլիճն ապողոնի . և
խոստեաց այսուիկ խաբանօք զայլոլթի իւրոյ երկուց
կոչնականաց . մի զի իւրաքանչիւր դահլիճ ունէր զիւր
նշանակեալ ծախս . և առեալ նոքա առ իւր ծառայս՝ յոր
դահլիճ կամէր ճաշել , խնդրեցոյց նոյ թէ որպէսի ինչ ու-
նէին ծախել , և որպիսի ծառայուի առնել : Ա՛րդ ծախք
ճաշոյն՛ի դահլիճն ապողոնեան՝ էր չխուն հինգ դրամոյ՝
որ քսան և հինգ հինգ փռանգաց : Ա՛նհատատալի իմն թուի
այս . այլ ես գրեմ զկետ երթեալ իմումն հեղինակի :
Ալկերոն և պոմպէոս զարմացան յոյժ ընդ մեծածա-
խութիւն սեղանոյն , և ընդ չուքաւորութիւնն՝ որով
հանդերձեցաւ :

Ա՛յտիս [1] լուկուլլոս խաղ առնէր զիւրովք ճոխութիք ,
համարեալ զնոս (զի ասից պլուտարքոսի) արդարև աւարս
բարբարոսաց , զորս իրաւունք պատերազմի թողացուցա-
նէին նմա անարգել և անգոսանել : Ա՛սյց արժանի է մե-
ռումն գովուել մի սյլազգ իմն ազնուական և խոհական
ծախուց : Ա՛ղէ գրատեր , և ժողովեաց գիրս անթուաս , Գրատուն
անխնայեալ՛ի ծախս՝ զի իւրն գեղեցկագոյն և ընտրե- իւր , և աղբը-
լագոյն օրինակք : Պէտք իւրոյ գրատան առաւել ևս ե- ւական կե-
ղէն գովանի զի զնոսա զոր կալաւ՛ի կազմութի նորա : բառուն նր :
Ա՛ահլիճքն՝ ուր էին մատեանք , և դարաստանքն որք՛ի
հանդիպոյ , և սենեակք ընթերցանութե՛ բաց էին ա-
մենեցուն . և յոյնք որք կային՛ի հռովմ , խուռն ընթա-
նային անդր յամ կողմանց իբրև՛ի հիւրանոց Ա՛ուզոյց ,
ուր զուարճագին անյուցանէին զաւուրս , և սփոփէին
ընթերցանութե՛ յազգիկ և՛ի զգաստանայ իւրեանց պէս
պէս իրողութեց : Լուկուլլոս երթայր սակս ճեմել զի
նոսա յիւր գարաստանս՝ խօսել զգիտնական իրաց . զի
ուշ նր պերճայեալ էր իմաստութ ուսմանց՝ որ ասայաք
այլուր . և ձեռնտու և լինէր իւրով մեծարոյութ այնց ,
որոց յանձն էին իրողութիք իւրեանց փոքրիկ հասարա-
կապետութեանց , մինչև տան նորա լինել ապաստանա-

[1] Վ՛ր որոյ աստանօր թշնամանօք բեալ և ընդ բարբարոսական ։
վարեցաւ զի ճոխութե՛ ոչ ընդ գե-

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։

ման հասարակաց, և * Պրիտանէին՝ յունաց եկեղց՝ի Հռոմ։

Պրգանք և գրականուն՝ ոչ այնպէս պատաղէցուցին զքրիստոսեայս՝ի յետնորդ ամ իւրոց կենաց, մինչև չպատալել ամենևին և՝ի հասարակաց իրողութիւս։ Այլ այրաբար զայն մեղմբինակ և ընդ պահս պահս. և իմ՝ի մոլ եղեալ ի յեռուզ յիւրում տեղոջ և զսակաւն զայն՝ զոր ինձ ասել գնամանէ։

Ծնունդ ս. գոսպոսի։ Ա--Ե. յոգ. գոսպոս. Ի. հբ. գք։

Վարձոյգք՝ի հիւպատոսութէն կիկերոնի, և՝ի գաւառդրուն կասիլինայ։ Այլ յառաջ քան զայս պատշաճ թուի ինձ խոսիլ առ ետեղ զծննդենէն օգոստոսի (կայսեր,) որ եղև՝ի 22 սեպտեմբերի այսր ամի։ Ի վեր երևեցան զայսմանէ բազում առասպելք։ Այլ պատմիչք ոմանք մարդահաճոյք ոչ զանց ապարին չքեղացուցանել բազում գուշակութիւք զծնունդ նոին ինքնակալուն։ Ասացաւ, թէ Ա. ոկտավիոսի հօր սորա եկեալ անագան՝ի ծերակոյտն, իբրև՝ի էքմէղս եղև՝ յառաջ քերեալ զերկուսին հնոջ իրոյ, նիգիդիոս փիգուլոս ձայն եբարձ. Կին ոմն ծայեաց ձեզ ահ։ Կիգիդիոս մի եր՝ի գիտնագոյն ծերոց նեացն. մանաւանդ ոսեալ եր իմաստիւ զպետարանական աստղագիտուն։ Պարթ է կարծել, թէ միա էդիէ իսկ պատշաճել ծննդեան օգոստոսի և զգուշակեալն՝ի պատգամաց մերոց՝ըզ մարգարէից՝ի վէր եկաւորուն մեսիային։ Յօտ էր ժամանակն, և ձայն այսց յաճոյին մարգարէութէց հնչեալ էր՝ի հեթանոսս։ Վերթիլիոս. Հաբնարէ։ Կատանէին այսր հետք՝ի գիրս սիբիլլային. և կայր յայնժամ հաստատուն կարծիք՝ ըստ ասից սուետոնիոսի, թէ բնութէն յերկուսն իսկ, և հանդերձեալ նսկ ծնանիլ զարքայն արեւելից։ Այլ ոչինչ այնպէս է անտեղի, ոպ այն՝ զոր նոյն սուետոնիոս բերէ վկայութ ուրումն ազատագրի օգոստոսի, յուլիոս մարաթոս անուն։ Այս մարաթոս գրեալ էր, թէ ծերակոյտն զարհուրեալ՝ի գուշակութէց աստի որք հնչէին՝ արար հրամանագիր, որով արգելոյր տածել զոք՝ի տղայոց՝ որք ծնանիցին յայսմ ամի. և թէ այս խորհուրդ ծերակուտին հեղձուցիկ եղև յայնց՝ որոց կանայք էին յղի։ Կարի լիս պատիւ լիներ արգեօք հերքել բանիւ զայս առասպել։

Զոյնպէս համարիլ արժան է զատապատիր երազ կատուլոսի, որ ըստ ոմանց՝ յետ նաւակատիս առնելոյ

* Պրիտանէին. յոն. բռիգանիօն. Էր թեղի յոնէն՝ի դէնիէն, ոսր պրէսանէս անուամբ ոնոսանեալ գաղատորդն առնէին։ գաղատացան. յորմէ և գարմանէին հասարան ծախիւ բարեացատարդան հասարանագիրք։

կապիտոլիոնի , տեսանէ յերկուս գիշերս մի զմիոյ զկնի զոմն տղայ , որ ընդունէր 'ի գիրսն մատնաւոր գգուանս , և ընտրեցաւ 'ի չիմծոյ անտի լինել պահապան և խնամակալու հասարակապետուե : Կատուլոս ոչ ճանաչէր զայս տղայ , բայց 'ի վէր բերի , Թէ յաւուրն որ զկնի երկրորդ երազոյ իւրոյ՝ պատահեալ մանկանն ոկտավիոսի , ծա նեաւ զնա , զի էր այն՝ զոր տեսեալ էր 'ի գիրկս գիսի : Յայտ լինել առասպելիս յայտ անտի է , զի նաւակա տիք կապիտոլիոնի եօթն ամաւ յառաջ քան զծնունդ օգոստոսի :

Ա. Հ. 689 : Ն. Ք. 63 :

'Ի ժամանակի յորում նա ծնաւ՝ կատարուէր կատա լինայ էին առաւելեալք յոյժ , և ահրնկէզ էին համ քա զաքին : Երբև մտեցնեսցաւ այս վերիպեցաւ 'ի հիւպատո սուեն , չեզև միջոց յոր ոչ ձեռն եարկ , և ոչ հնար՝ զոր ոչ հնարեցաւ , առ անդրէն կանգնելոյ զիւր կողմն ընկ ճեալ՝ որ յաջողեաց իսկ : Օ օրացաւ ևս ընդ ևս . ժողո վեցաւ զինս 'ի պէսպէս տեղիս իտալիոյ . կուտեաց արծաթ ըս մարթելոյ՝ իւր և իւրոց բարեկամաց մեծարոյութ , ա ռաքեաց զայն գումար 'ի ' փեսուլէ եարուբիոյ , զի յանձն լիցի մալլիոսի ասելին , որպ երբեմն ծառայեալ եր սմա սրտի մնօք առ սիլլայիս , որ և զինն լծորդեալ ընդ կա տիլինայ կապանօք ապիրատուեն և Թշուառուե , էզև առաջին 'ի վարուի զինու յայսմանակս : Կատիլինա ստա ցաւ և բազում նոր կուսակիցս . և եմոյծ յիւր գաւադ բուեն ևս և զբազում կանայս ազնուականս , որք էին ինչ ընդհատ 'ի խնեղեալ և 'ի յանդգնուե 'ի մեծեղեռն արանց : Կամէր գործի առնել զայն կանայս 'ի վտարան ջեցուցանել զբուսորուկս , 'ի տրծիգ առնել զբաղաքն , 'ի շահիլ զարս նոյ , և կիր 'ի Ճողոպրել զանձն 'ի նոցանէ :

Կասիլինա անդրէն քա ջալերէ զնիւր կողմն :

Կիւերն . 'ի խաբէնա :

Սալուստիոս : Պլուտ . 'ի Կիւերն , 'ի իւրաս սս , 'ի Կեսար , և 'ի կապն :

Դիոն . լէ : *Խոսալ փիէ զբաղ 'ի գոսկան :

Բազում կա նայք մեծազ գիք մտանէն 'ի գաւադ բուե նորա :

Սալուստիոս անուանէ զնի միայն 'ի կանանց անտի . և ես համարիմ անպիտան լինի , ոյզ և անհնարաւոր՝ գու շակ լինել զայլոց կանանց : Այլ զոր անուանէն , այնպս զինչ նկարագրէ՝ որ իմ չիք ակնկալել , և ոչ են կամք հաւասարիլ նմ : Սեմպրոնիա՝ որոյ այս է անուն , եր կին աշնուազգի և գեղեցիկ . և Թէ կարողանայր խնաստուն գնացս ունիլ , լինէր երջանիկ արամբ իւրով և որդւովք : Կերհնէն եր գրականուեն յունաց և լատինացւոց , ու սեալ եր և գարուեստս վտանգաւորս , որք հրապուրեն 'ի մեղուեն . երգէր և կաքաւէր (ասէ պատմիչն) գեղա պատշաճ վայելչանօք քան զարժանն համառօտ կնոջ : Ունէր զնմ հանգամանս յանկուցիչս 'ի զառածուն . կայր ինչ ապահաս յայս նր յամ ժամանակի ք զօրինս առաքինու

Բոյս բարուց սեմպրոնեայ :

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։

թէ, և դժուարին եր ասել, յարձակէ արդեօք անխըն-
նայեր, թէ ի յարգ իւր։ Ձեր յերկոտա կանանց անտի,
որք և ի յանցուածս իսկ պահին երևոյթ ինչ համա-
տուէք. Ձակատ իւր երբեք ոչ շառագունեսցաւ, և մի-
լուէքին հասաներ ի նմա ցկտուէքի։ Յոփուէին ընտելա-
ցոյց վնա միել ի գժնդակ ոձիրս։ Վարել երդիւնակուռ
հաւատարմուէք, և սուտ երդնուլ յուրաստ աւանդիս
ինչ կիր պատեաց, լինել մեղսակից բազում սպանուեց
եին նր խաղալիկք։ Ասցց իր այսչափ ապերասուէք ոգ-
ևոյն միակցեալ ուներ զամբարտ ձիրս մտաց. գիտեր
տողել ոտանաւորս, զուարճաբանել, և սիրր կենակցուի
ընծայել բերկրալի և ախորժական. յուշեալ զանձն եր-
բեմն համեստ, և երբեմն յոխ և անամօթ, իր բնաւորու-
թէ անձանց՝ որոց կամէր հաճոյանալ, լի զուարթուէք
և լի հնարհաշուք վայելչուէք։ Հանգամանք՝ որք յոլո-
վակի թուին առաքինուէքի, բայց (ոչ տեսանի յայսմ
օրինակի) ոչ այնպէս քաջ միաբանին՝ որպէս ընդ յան-
ցաւորութեան։

Կատիլինա ընծայացեալ միաբանգամ ի ինդիր հիւ-
պատոսուէ։ Իւր ինդրո-
պակիք։

Կատիլինա տեսանէր միշտ, թէ պիտի նմա հիւպատո-
սուէ ի կատարել զիւր առաջադիր գործ։ Ո՞ր այսորիկ
հաստատեաց ի միտս մտանել միաբանգամ յընծայակ-
ցուէ, վստահացեալ մեծապէս յանտնիսոս հիւպատոս,
և ի մտի եդեալ գտանել զնա՝ պատրաստական բարե-
կամ ձեռնտու լինելոյ նմ, յորժամ ի համր մտանիցէ։
Իսկն նր երեք ինդրողակիցք։ Ղ. յունիոս սիլանոս. Լ.
լինկինիոս մուրենա. և Սեր. սուլպիկիոս Հռուփոս։
Ամենայն թէ սիլանոս ի սկզբան անդ հեշտեաւ անտանե-
ցաւ. և զի այսր մնացը մի միայն տեղի հիւպատոսուէքն
զձակեզի ի մէջ երից ինդրողակցայ։

Պոմպանիոս չա-
գաթ ծագման իրաւագիտու-
թեան։

Սուլպիկիոս եր այր բարեկիր ի պատրկական տոհմէ,
և մեծ յիրաւագիտս երևեալ ի հռովմ։ Օ առնէր ձեռն
արկելոյ նր յուսումն իրաւագիտուէքն, արժան և առ ե-
տեղ ի մէջ բերել։ Ասենաբաներ հաչակաւ՝ առանց
ինչ ծանօթուէն ունելոյ իրաւանց, ոչ եր սովորուն փաս-
տաբանից հռովմայ։ Ո՞ր այսորիկ չոքաւ հարցանել խոր-
հուրդ ի մուկիոսի սկեվոլայ, ի վեր վիճի միոյ ուրուք
յիւրոց բարեկամայ՝ յորում կայր ի վարանս։ Սկեվոլա
մեկնեաց նմա զբուն իրաւունս՝ յոր կայր գժուարուէն,
բայց սուլպիկիոս չիմացաւ ինչ։ Սկեվոլա դարձեալ մեկ-
նեաց զայն. բայց և յայնժամ չիմացաւ ինչ։ Ցայնժամ
սաստիկ կշտամբեաց զսուլպիկիոս. ասէ. ամօթ նախա-
տանայ է պատրկի, և առն ականատորի և փաստաբանի

չգիտել զերաւունս՝ որ նմա ուրեք պիտին նմա։ Այուլիկ. կիսոսի առնեաւ յայսց նախաստանաց՝ եւ զանձն յու- սումն իրաւագիտութեանն այնպէս տարփմամբ և յառա- ջադիմութ, մինչև անցոյց զանցոյց զամենեքումբք եղե- լովք յառաջ քն վնա։ Յայնմ օրէ ոչինչ իմիք այնպէս միտ եդ՝ ոչ իրաւագիտութեանն ։ Հրաժարեաց դոգյես իս- պառ՝ի գործածութենէ Ճարտարիսասութ, և ուր ուրեմն արար առենախոսութ. զի առաւել [1] սիրեաց՝ ասէ կիկե- րոն, առաջին լինել յարուեստի՝որ երկրորդ ե կալգաս, քան երկրորդ յայնմ՝ յոր հայլ առաջինն ։

Ա. յասիսի եր սուլպիկիոս՝ արդարև արժանաւոր հիւ- պատոսութե. բայց պնդե կիկերոն, Թե՝ի հայցուած գերակայ աւագութես կալաւ այնպիսի ոճ, որով մեծաձգս վստահայոյց ցկատիլինա. զի յուցաւ առաւել խիստ և սրտեայ ոք՝ի ծերունեաց ծերակուտին, քան Ճարտար և խոհական ոք պայծառագգեաց ։ Այբուսիկ հնարք և գաղտնի հետապնդուե էին ոմն Թե սովորութ ընկալեալք յընտրուես իշխանաւորաց ։ Այուլիկիոս որ ոչ Ճանաչէր այլ հնարս՝ բայց զարգոյս, ջանայաւ՝ զի դնչի նոր օրէն ընդեմ գեղծմանցս, և կիկերոնի՝՝ի սահպեղ նը յանձն եղև՝ի ծերակուտէն՝ յառաջ բերել նոր ինչ օրէն խիստ ը զառաջինն, որ պարտաւորեր զնեղապարտս գաղտնի հետապնդութե՝ի պատիժ [2] աքսորանաց ։ Այուլիկիոս զինեալ այսու օրինիւ՝ սպառնայր իւրոց խնդրողակցաց՝ ամբաստան լինել զնոցանե. խոյզ և խնդիր առներ նո- ցուն գնացից. ժողովեր ցոյցս և վկայութիս, երևեալ միշտ տխուր և մտայոյզ. և յուցեալ նշան՝ Թե, մեր- ժուն ինչ լինիցի ։

Այաւիլնա զսորին հակառակն բարձրագոլեաս շրջեր և վստահ, զիւրեաւ ունելով խումբս առոյգ երիտասար- դաց և բազմութի խրոխտ արանց ։ Ա.եկնածուն բազում պատերազմականաց և խոստմունք հիւպատոսին անտու Նիոսի ազգ.ին՝ի նա քաջալերուի մեծ ։ Յրևեին զնուաւ որպէս բանակ զօրականաց սիլլայի, որոյ զնակայեալ՝ի Հատուածս * արեաիոնի և փեսուլեայ, և չքաւորեալք աւ խենեղուե իւրեանց, [3] ի խնդիր էին նորոյ աւերի Ճոխանալոյ աղետիւք իւրեանց քղքակայց ։ Իւր զօրօք էին [3] խրոխտք. և տալաւորեալ ունէր՝ի Ճակատ իւր և՝ի հայեցուածս՝ յանդգնուե և կատաղուի, մինչև Թուլիլ

* իտ. առէզցս։

Ա՝ Հ. 689։ Ն՝ Ք. 63։

Վէ Տոբէնայ։

1 Թուլի ինձ ընտրել նմա նախա- նուսն ։ Կիկ. ՚ի Բրուտոս. համար 151։
մեծար, լինել առաջին յերկրորդ արուեստին, զ երկրորդ յառաջ-
2 Գիտե՝ գառնամեայ ասէ զայս ապտրս։
3 Գէպք նր լի էին կատաղուե։

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։

Թէ անվրէպ լուր իցէ հիւպատոսուէ, և արկին զբռամք ունիցի զայն։

Պուբլենա՝ որ անփոյթ երևէր, էր յընթայակից անդ արհամարհ ոք։ Իր բարեսովիկ, Թէպէտ և՛ ի ժողովականաց անտի։ Ձայր նը, հաւ նը, և իւր նախահաւ՝ լեալ էին պրետորք։ Ձայր նը էր և յաղթանակ կեալ։ և հասանէր անվրէպ՝ի հիւպատոսուէ, Թէ վաղահաս մահու էր զայն խափանեալ։ Պուբլենա իսկ լեալ էր հանրական տեղակալ ըստ լուկուլլոսիւ. և յաղթական հանդէս սորա փոքր մի յառաջ խմբեալ էր զզօրականս իւր՝ի հռովմ՝ի դէպ ժամուն՝ առ նպաստամատոյց լինել ինդրուածոյ միոյ՝ի գլխաւոր սպային նը։ Ծանր գի յոյժ էր հաւանական՝ անխնայել մուբլենայ յարծաթի գնել զքուեայս։ Ռատաձեռնեալ էր և ինքեան ուրախութեամբ ժողովրդեանն, և ջանայեալ էր որպէս ամի իրօք զՀաճոյս քաղաքացոց։ Համառօտ ասացից, էր սա այր պարկեշտ, սիրող խաղաղուեաւ և հաստատակաց հանդարտութեամբ. յորմէ ամի բարեկիր անձինք՝ որք ակաւեակ էին յակնկալութեան կատարմանայ, զկողմն ունէին սորա։

կիկերոն չքոյանէ զամ ազարա նը։

Ձայր չարաշուքն այն չուներ իւր ինչ մեծ ի գիմակալութեան կիկերոնի։ Ընթացն հիւպատոսն հետապնդեր էր ամ արարից նը։ Ընդհատին յաւուրսն առաջնոց իւրոց հիւպատոսութեան շահեալ էր նը՝ի ձեռն փութալեայ գնուրիոս ումն գմի՝ի գլխաւորաց դաւադրուեն. և արարեալ նմա խոստմունս մեծամեծս, յանկուցեալ էր զնա՝ իմացուցանել որչափ ինչ ասեր և առներ կատիլինայ։ Ընդ այսուիկ հնարիւ՝ անտարակոյս իրագեկ եղև կիկերոն նորոյ ժողովոյ իւրոց գլխաւոր կուսակցաց՝ խմբելոյ՝ի կատիլինայիւ չիւրուամ տան, ուր ասացեալ էր։ ,,Ոչ ոք կա,, րող է լինել հաւատարիմ և արիական ջատագով Թըշ,, ուառացեալոյ, Թէ ոչ և ինքն իսկ Թշուառ. վ՛ն այսորիկ ,, որոյ իրողութիւք են վէր՝ի վայր, անմարթ է նը վստա,, հանալ՝ի խոստմունս այնց՝ որք յանդգնեալ վճռակ վայե,, լեն։ Ասասի և ամենեքին ոք կամիցին անդրէն չիւ,, բեանս կորզել՝ զոր ցրուեցին, կամ որ յաւիտանակեցաւն ,, ի նոցանէ, չկա միայն ակնկառոյց լինին, տեսանել՝ ,, զի՞նչ կայր իմ, և քանի՞ պարտիք, և չի՞նչ ձեռն արա,, կի զչափ առնուլ։ Օ՜ի հարկ է գլխոյ և դիւրակրի չա,, րաբաստից՝ լինել յետին չարաբաստ, այլ՝ ո՛չ իւիք երկ,, ջոտ,,։

աչք՝ ակնառութիւք, բանք՝ ժպրհուեալ։ սուէն՝ հաւաստի, և առ անին ամԹէ։ մինչև Թուիլ նմա հիւպատո- փոփեալ։ Կին։ ե՛ Ֆաբրենայ։

Ա՝ Հ. 689։ Ն. Ք. 63։

Լուր այսց բուռն և վտանգաւոր պատերազմի հնչեալ ընդ ամ՝ քաղաքին, յայտ է Թէ ջանիւ կիւկերոնի։ Ընդդէն վազվզակի եւս հանել հրամայեաց ի ծերակուտէն, փոխադրել յայլ ժամանակ զժողովդ ժողովրդեան՝ որ լինել էր ի վաղիւ անդր, և յոր հանդերձեալ էր կատարել զնշանակեալ ընտրութիւնն։ Փոխանակ ժողովոյ ժողովրդեան եղև ժողով ինչ ծերակուտի. ուր իբրև եկին կատիլինա՝ կշտամբեցաւ՝ ի կիւկերոնէ. և հրամայեցաւ նմա արդարացուցանել զանձն յեղելոց անտի՝ որ պատմեցաւ։ Կատիլինա բնաւ ինչ ոչ շիտիթեցաւ։ Ընդհանրին յանդգնութիւն, բայց և առագաստեալ զանձն կեղծ համեստութիւն, ասէ։ Ես ո՞ր եղեն իմ յանցանք։ Կամ ի հասարակապետութիւնէ երեսս խոնարհ. զի պարտ և անլոր, որպ և գլուխ նոցին պիտ է։ (իմանալոյր զծերակոյտն, որոյ հիւպատոսն էր գլուխ.) Դեռ կղօր և ղօրաւոր, բայց անգլուխ. (նշանակեալ զժողովուրդն։) Ընդէ՞ր ես այս խոնարհ ասէ, կարծ էսկ բարեպաշտպարտ է առ էս, զինչ չէ արժան ինձ խորհել զնա առանց գլխոյ՝ որ պիտոյն է նմա։ Կիւկերոնի իրաւունք եղեն ասել. Թէ կատիլինա պատասխանատուութիւն չէ՝ ի չքմեղս եղև անձին, այլ զսորին հակառակն՝ ի բայ մերկանալոյ յանձնէ զպատրուակ երեսացն, և անձամբ զանձն հարկանէ, երևեալ գլուխ հակառակ կողմանն ծերակուտի և հիւպատոսին։ Հայերևագոյն ևս էր յայտնեալ նոր զայս աւուրքդ ինչ յառաջ, ի խօսիլ իւրում ընդ կատունի՝ որ սպառնալոյր չարախօս լինել զնմանէ։ Ասէ. Երէ յարեցէք հրդեհ ի տոհմասանել ինձ, ես ընդ-ոչնչ ընդրդեհն ոչ ըրէ, այլ տոքճանամբ ընհոածոց։ Այս էր ասել յայտնապէս. Թէ հանդերձեալ էր ոչ ի վայր արկանել հասարակ հնար առ արդարացուցանելոյ զինքն յամբաստանութենէ. և Թէ մնայր նմա կորնչիլ, գեթ ոչ կորնչէր միայն ընդ միայն։

Կատիլինա կամի տալ սպանանել զհիւպատոսն ի դաշտին առեսի։ Զհասանէ հիւպատոսէ։

Օ արմանք են, զի յետ այսպիսի յայտնութեանց՝ կատիլինա իշխեր դեռ բնակիլ խաղաղութեամբ ի հռովմ, և հանապազորդել զկետ պնդելոյ գերագոյն իշխանութեանց։ Այլ օրինք առ ժամն այնպէս ակար էին, և կողմն եղեռնաւորիս այնպէս ահեղ, մինչև ծերակոյտն շատացաւ հեծել առ ժպրհութենէ նոր, քան ձեռնարկել ի զօրաւոր գնաւոր ձնշելոյ զնա։

Կատիլինա խնդրէ սպանանել զկիւկերոն ի տանն իւրում։

Կատիլինա խնդրեաց և ի վարձու ունել արս սպառազինս ի դաշտ արեսի՝ ի սպանանել զկիւկերոն ի ժողովն անդ, ուր էր բարձերեց։ Իբրև ազդ եղև կիւկերոնի՝ յառաջագոյն զգուշացաւ։ Յառ ընդ իւր բազում ուղեկիցս ի բարեկամաց, և յորոց ի հովանեաւ իւր էին.

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։

զգեցաւ և ըստ հիւպատոսական հանդերձիւք լայն վարպանակ՝ զոր և կամովին երևեցուցանէր, զի բարեացպարտ քաղքացիք հասու լիցին վտանգին՝ յոր կայր իւրեանց հիւպատոս, և զի նորանշան առնիւս բարբառքեսպի և ևս նախանձաւորուն նմ։ Մինայն ջանք կատիլինայ անպիտանացան։ Ոչ եհաս նմա զերծ լինել՛ի կիկերոնի, և ոչ անուանիլ հիւպատոս, և նախամեծար ընտրեցաւ քան զնա մուրենա։

Կատիլինայ անդրդս լեալ՝ եդ՛ի մտի ձեռնարկել՛ի յետին ձիգն, և յայտնի պատերազմիլ, որովհետև իւրոց գաղտնի մեքենայից չէղև յաջողել։ Ուստի ասաց՝ զմայլիս՛ի փեսուլէ, զեպտիմիոս ոմն՛ի պիկենոն. զվ. յուլիոս ոմն՛յապուլիա, պատուէր տուեալ ապստամբեցուցանել ամ ուրեք զանգոհս, և վաղել զնոսա պինու. և ինքն հանապազորդեաց ճամբ՛ի հռովմ՝ գուն գործեալ դարան գործել հիւպատոսին, և զկարևոր պատրաստութիս հոգալ՝ հրձիգ առնելոյ զպետպես թաղս, և զգուշանալ պիտանագոյն կողմանց քաղքին։ Ստական եր առ ամենայն. զոյգ և զգերեկ զարթուլ պատուիրէր, ոչ աշխատութի և ոչ քուն պարտասեցուցանէր զնա։

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։

Ստղ լինի կիկերոնի՛ի կրասոսոկ։ Պետ. ՛ի ին. Ե՛ի ին. բասոս։

Ա. Հ. եվև կիկերոնի որ ինչ լինէր՝ անլուր իմն օրինակաւ՝ ի մէջ գիշերի կրասոս, Մ. մարկեղոս, և մետելլոս շիպիոն եկին առ դուրս տան նր. և զարթուցեալ զնա՝ ետուն՛ի ձեռս նր թուղթս ինչ հասուցեալս առ կրասոս յետ ընթերեցս յանծանօթէ ումենէ։ Յայսց գրոց միջն կայր գիր մի ուղերձեալ առ նոյն ինքն կրասոս, բայց անանուն։ Ո՛չ թուղթք էին ուղերձեալ առ այլս ոմանս։ Յերբ եբաց կրասոս գիրն, տեսեալ՝ թէ ազգ առնէին նմ՛ելանել՛ի հռովմայ, զի կատիլինա հանդերձեալ էր յետ սակաւուց առնել՛ի նոմա ահեղ կոտորած, զահի հարեալ յերկիւղէ և կամեցեալ զերծ լինել՛ի կասկածանաց՝ զոր իւրոյ նախնի կոյրդուէն ընդ գլխոյ դաւադրութեանս հնար եր ծնուցանել, հապճեպ եկն հասուցանել զայս թուղթ հիւպատոսին։ Կիկերոն ետ խմբել զծերակոյտն. ետ զգերսն իւրաքանչիւրում յայնց՝ առ որս էին ուղերձեալ, և՛ի միջ մի՛ի նոցանէ գտան ազգարարութիւնք նմանակք եղելոյն՛ի գրին կրասոսի։

1 Վաղուս նա ասացի զմայլիոսէ լինել՛ի նեղել՛ի քեսուլէ, յայսմ գիշեր լուծայ ազգ լատոբիոսի, որպէս և ասացաւ գիշեր երբեմն նորա։ Գուցէ մայլիոսի յայսմ վայրի եղիցէ խոտ՛ի հռովմ յենգիսս լինել նմա՛ի խնդիրս հնապատուոյն։ Ե. Կամ որ յառաջին պատմեցաւ՝ էին նմանալի որպէս կանխիկ ինն ասացեալ։

Ա Հ. 689։ Ն. Ք. 63։

Վ տանդն համարեցաւ մեծ յոյժ. և Թուխ ։ Թէ այս ժողով խմբեալ՝ի քսան և մին հոգեւոր՝երի, իսկ այն՝ յոլոր հոգի ուրեմն դիմեցին յայն օրինակ ծերակուտական վճռոյ, յորում առեալ լինէր իշխանաւորաց անկոպար ղօրուն, ասելով։ ,, Ծերակոյտն յանձն առնէ ,, հիւպատոսաց տքնիլ՝ի պաշտպանուն և՝ի փրկուն հասա- ,, րակապետուն ։ Օ օրուն վճռոյս խմբեցան գունդք, և՝ի վար արկան այնք՝ որք էին հաւաքեալք և պատրաստականք ։ Կ. մարկիոս ոչքս, որոյ հրամանատար լեալ էր՝ի կիլիկիա՝ յառաջ քան զառաքումն պոմպէոսի ընդդէմ միհրդատայ, և Կ. մետելլոս կրետացի, կային՝ի բազում ժամանակաց հետէ առ դրունս հռովմայ, անկատարեալ առնուլ հրաման յաղթանակի ։ Այս կն էին դեռ մտեր՝ի քաղքն, ունելին պահեալ զիշխանուն՝ին փոխանակիս պատասխան, և զօրականք նոցա չէ էին՝ի բայ արձակեալք ։ Այս երկու փոխանակիպատասխ առին հրամանս չոյ առնելոյ, առաջինն՝ի փետուրէ, և երկրորդն՝յապուղիա ։ Երկոքին պրետորք Կ. պոմպէոս հռուփոս, և Կ. մետելլոս կելէր առին պատուեր երկաքանչիւրն զօրաժողով լինել, և երթալ՝ առաջինն՝ի կապուա, ուր ազգ եղև Թէ խմբելին բազում ստրուկք. և երկրորդն՝ի պիկենոն ։ Վ՝ինագամայն և խոստացեալ եղեն վարձք ոմի՝ որ գուշակ լինիցի չարաչար խորհրդոց, զորս մեքենայէին ընդդէմ հասարակապետուն, Թեպէտ և՝ի մեղակցացն ոք էր. յո՝ զաշատուԹէ, և կՀարիւր Հիր սեաներտս, (որ է երկոտասան Հիր և հինգ հարիւր լիրայ,) եԹէ՝ի ստրկաց ոք էր. և զանդատապարտուն, և զերկու հարիւր Հիր սեաներտս (յո քսան և հինգ Հիր լիրայ,) եԹէ յայլազգաց ոք էր ։ Վ՝ինչև լինել՝ի հռովմ պահպանուԹէն իբրև՝ի պատերազմեալ քՀքի, և ստորադաս իշխանաւորուԹէն պարտաւորիլ յոստիկանուԹի նորա ։

Աշխատիք և հոգք՝ի հռոմ։

Ա յս ամ [2] պատրաստուԹք, և այն ամ անսովոր զգուշաւորուԹիք՝ Հրկեցին գլխոցին զկերպարան քաղաքին ։ և արկին՝ի նա վարանս փոխանակ համարձակուԹեց, և

1 Փոխ. Ի հնոանամ՝ի Հարգե ա- ղանի Հարկանէին, ոչ՝ի վայր ուրեք լուսոպիոն, Բայց կայ իմ վաղ էրաՀատ- վատահ էին, և ոչ՝ի մի յոր. ոչ՝ի ար, որ այն Հնգն է կիկերոն յիւր ա- պատերազմի էին, և ոչ իսաղաղուն ռաջին ճառ կոպէլիենան։ ունէին. Իւրաքանչիւր զոր յանձին

2 Որովք վերՀ՝ի վայր էր քաղաքն, երկիւղ զմանդն չափեր ։ Ընդ այլ և կերպարանափոխ ։ Ի յհաին ուրա- ուզիւք, կանայք՝ յորս առ մեծուն խուեՀ և՝ի ցնծուել զոր ծնեալ էր հասարակապետուէն՝ անսովոր իմն Հանգիստ երկարատև, յանկարծակի յոգնաՀատխիծ արտմուել կալաւ էր երկիւղն, ցաւագնեալ էին ամ զամ, ձեռս աղերսահայցս յերկինս տարածելին, ազեատնային՝ի վերայ

Ա. Հ. 689 : Ն. Ք. 63 : անկարդ ուրախութեՙ՝ որք յառաջն զօրացեալ էին ՚ի նմ: Յերթային և գային հապշտեպ տագնապաւ : Ձկայր ՚ի միջն տեղւոյ անքոյթ և ապահով, և ոչ անձն՝ յոր իշխեա ցե օք վտահիլ: Ձկր ՚ի միջն պատերազմ, և չկայր օք ՚ի խաղաղութե. երկիւղն ևս ՚ք վեռ առաւելոյր զվտանգն : Այս առաւել կանոյք՝ որք յայնպիսում հզօր և ամուր քաղաքի անգետ էին վշտաց պատերազմի , լուծանէին ՚ի հեծութես և յարտասուս. ամբառնային զձեռս յերկինս , և արտասուակոյդ լինէին վիճակի մտատաղտուկ որդւոց իւրեանց : Ուշ եդեալ հասու լինել ոմի , ոմ զրոյց և ոմ լուր դողայուցաներ վնո : Ոչ մնուհետև ոչինչ միտ դնէին պերճութե և գրգանաց , և վտանգն՝ յոյս կայնն ՚ք հայրենեաց՝ էր նոյ մի միայն հոգ տագնապանաց :

Մալլեոս զինու վաւի : Կատիլինա զուր Ջանայ՝ տալ սպանա նել զկիկե րոնի յեւրուա ման :

Ուտանաս օր ՚ք օրե զօրանայր : Մալլեոսի՝ երևելի գունդ խմբեալ զօրաց յետուրիա , յայտնապէս զինու վառեցաւ ՚ի քան և եօթն հոկտեմբերի: Յե կատիլինայ ՚ի բարկութե բրդեալ, ՚ք զի եաես թե ոչինչ իրք յաջո ղեին նմա ՚ի ՚ք՚ղքին , ժողովեաց գիշերայն ՚ք վեց և ընդ եօթն նոյեմբերի ՚ի տուն Ուպ. պորկիոսի լեկայ՝ զժողով գլխաւորաց իւրոյ հաղմանն : Ընդ սաստիկ կշտամբեալ զվատասրտութե նոյ, որում տայր զձախող եաս ոմի՝ յոր ձեռն արկաներ , առաջի արար նոցա զարդեան վիճակ ի քացն . և նշանակեաց իւրաքանչիւրում տեղի և գործ ՚ք պատշաճի , ՚ի ներքս և արտաքոյ ՚ք՚ղքին : Ցաւել ՚ի վե՛ր , թե իմ կամք են , գնալ վաղվաղակի՝ կալ ՚ի գլուխ գէն դին գինեալ՝ որ խմբեալն է յետուրիա : Ոայց հարկ է ինձ նախ վերծ լինել ՚ի կիկերոնէ , որ միաստակար է ինձ յոյժ : Ոազուկք ՚ի նոցանէ գահի հարան յառաջարկու թեաս : Յերկու ամանք յասպետաց հռովմայեցոց՝ որոց միոյն անուն էր Ա. կուռնելիոս , յուպան՝ կամակորք քան զայլս , և անձնամատոյց եղեն երթալ ՚ի ծագել առաւօտու պատրուակաւ յայգաւորելոյ զհիւպատոսն , և սատա կել զնա յիւրում մահճի : Ասուրիոսի տեսեալ զմտաս լուտ վտանգ կենացն կիկերոնի , զգայոյց նմա վաղվա ղակի ՚ի ձեռն փուլվեայ . և վե՛ այսորիկ իբրև մատեան երկաքին սպասաքն մտանել ՚ի տուն նորա , փակեցաւ դուռնն ՚ք դէմ. և կիկերոն զերծաւ յայսմ ևս վտանգէ :

Գնալ ՚ի ծէ րակոյն :

Այսքեղ ՚ի նմին աւուր զժողով ծերակուտին, յոր ժպրէի և կատիլինա յանդիման լինել. Թէպէտ և հրապարա

որդւոց մատաղաց , հարցանէին ըս անյոյս էին զանձանց և զկայքե աեպ , զանգիտէին յաճէ , ՚ի բաց ե նեաց : գեալ շնպաբառւե և զիմափուլեՙ՝

կագոյժ ձայնը իմացուցանէին նմա՝ Թէ խորհուրդք իւր յայտնեալ էն, և արդ իսկ չարախօսք պնդանէ ի պատ-
ղոս, Թէ յանցաւոր է ձեռներիցուԹ՚ի գործս հակա-
ւակս հանդարտուԹեան և ապահովուԹեան քաղաքին և պե-
տուԹեան։ ¶ Եղապարտ խիղճ մտոց յայտնի հասարակօ-
րէն իրօք ինչ։ (Ա)ւրի Թէ կատիլինայ տուեալ էր պանձնել
ծանր ինչ կարծիս այսր ամբաստանուԹեան. պի անձնամա-
տոյց լեալ էր բնակիլ ի տան օտարի, և ըզ պահպանուԹ
ըղքաջսլոյ՝ որոյ յայտնի էր հաւատարմուԹ, առ խորհելոյ
(ասէ) յամր կեղակարծուԹ։ Իսկ ի չէր արդեօք անձամբ
անձին գուշակել շղԹայս և բանտս, ոչ ի դէմս իսկ
ածնէր կիկերոն, ի ձանձրանալ զանձն Թէ պահպանուԹե
պէտք էին նմա։ (Ա)յլ զի առաջարկուԹէն այդպիսի ոչ
առ այլ ինչ պիտոյացաւ նմա՝ բայց առ իմացուցանել,
Թէ քանի՞ երկնչէին և խորշէին ի նմանէ։ ¶. Լեպիդոս՝
յորմ տուն նախ առաջին կամէր երԹալ ազանիլ, չէառ
յանձն։ Օ՞նոյն արար ըստ նա կիկերոն, յայտ արարեալ
նմա՝ Թէ չառնու երբեք յանձն բնակիլ ըստ միով յարկաւ
ընդ այնպիսւոյ, ըստ որում չէր ապահով բնականալ և
ոչ պարփակ ի նմին քաղաքի։ Պրետորն մետելլոս կե-
լեր, և սա ևս այնպէս մերժեաց զնա՝ մինչև հարկ եղև
նմա դիմել առ ¶. մարկելղոս ոմն, որ իբրև զինքն էր
ոմն ի կեղակարծից, և մի չիւրոց նախնի բարեկամաց։

Յայց և այնպէս ձեռն էարկ չիւր խորամանկ և յան-
դուգն բնաւորուն՝ գալ ի ծերակոյտ անդր. ոչ Թէ ոչ
զլանէին զրոյցք, բայց զնոտի շէնջանաց, և զսուտ
կասկածանաց. որք ըստ երևելն անվեհեր վաստակէ՝ ան-
դէն չքանան։ Յայց զչափ էառ՝ զի ոչ որ պատրեցաւ չիւ-
րոց կեղծեաց, և ըստ մնանելն ընկալաւ նոր վկայուԹի ա-
տելուԹ, և հասարակաց զըսանաց։ Օ՞ի ի մէջ այնչափ
ծերունեաց ծերակուտին՝ որոց բազում էին իւր ազգա-
կանք և բարեկամք իւրոյ տոհմի, ոչ գտաւ և ոչ մի ոք՝ որ
ողջունէր զնա։ Այս իբրև մտաւեալ ի բազմիլ, ամենեքեան
նոքա՝ որք գտան առ նմա, և որք բարձերեցքն էին և ե-
րևելագոյնք ժողովոյն՝ Հեռացան, և Թողին Թափուր
զնստարանս նմա՝ որք էին յայնմ կողմանն, ուր էր նա։

Այս ոչ այսչափ միայն։ Կիկերոն ըստ հարաւ ընդ նա սաս-
տիկ բանախօսեալ, որոյ պատճէն եՀաս առ մեզ, և որոյ
յայտնի է ամենեցուն յաւմնալիր և հրացայտ սկսուած,
զոր երկիւղ և յաուսմն Թափեցին ի բերանոյ հիւպատո-

կիկերոն հաւամբէ զնա խոհս և յիբեաս իսկ ըստ հարկանի ըստ նա։ Առաջին ճառ կատիլինեան։

1 Քանի՞ բացական Թուիցի ի արժանի վարկաւ պահպանուԹե-
բանակ և ի կապանաց, որ զանձն կիկերոն։ ի կոփլինա։ ա։ 19։

Ա՝ Հ· 689· սին։ Պինել ՝ ցնորք առ կանխելնա , ղեղծանիցիս վերովս երկայն
Ն· Ի· 63· մտօրէ · զինչև ցնորք կատարեսցէ զո այլ խաբէութեամբ պղծէ և չհատանել
կատարեսցեն ։ Ոչ զարմանալի երբեմն զո ապականան չանդգնեսցէ այ-
պանել պղծել ։ Իսկ պղծեալ · ոչ սասանիցիս , ոչ սասանիցիս · ոչ չանա-
վեր պճուճասարքութենէ պետիցելոյ գեղերային գուսնեպս զօրաց ՝է լերինն
պալատինոյ · ոչ ՝է գեղերական պանպանութենէ որ կայ ՝է բովանդակ հա-
զարիս · ոչ յարհատաց հասարակաց · ոչ ՝է խոնարհելոյ բարեպատուի-
րեց՝ որ առ հաճի դաբանելն են ընդդեմ հեղ · և ոչ ՝է պեղոլնէս ,
՝է պետենէս Աթոռի Առաքելի , որ ընտրեցաւ ՝է ինչ առ առնելոյ
զայս ծաղով , վե լինելոյ նը ամբապահեսի · և ոչ չերեսաց և ՝է հայ-
եցուածոյ ամենեցուն առցի՝ որ վե լսեն ինչ , և որ խոնարհասիրեցաց
են ՝է հեղ ։ Ոչ եմանաս , ևե զո խորհուրդս յայտնել են ։ Ոչ գե-
պես , ևե զո գաւաբրութե ծանուցել այսօր ամ հանրեսակեանց ծո-
ղովոյս , արդեն ՝է հաղբս ե ըմբռնելոյ ։ Ալարծեցիս , ևե ոչ ՝է ինչ
անգեպ էղե ամ՝ զոր արաբեր յայտ և յանցելոյ գեղերի , ո՞ր էին ,
ընդ որս խորհուրդ կալաբ , և պի՞նչ օրոշումն եղև առ ՝է հեղ ։ Ոչ
ծանանակիս · ոչ առնբուեցիս ։ Ներկայիցն պեղեցացել է այս ամ
երաց · հիւպատոսն պեսանէ · և այբ այդ պակասին հենդանի է ։
Այո պի՞ ասեմ՝ գեռ հենդանի է ։ Այ՛ ՝է ծերակոյտն · ընդոսնելի՛
լինել ՝է հասարակաց խորհուրդ · ընտրե այժմ ՝է ինչ · չանանէ չան-
ոսանէ նշանակել պի ի՞ ՝է ինչ՝ երբ ՝է պեղնէս ՝է խոպնգել ։ Այո ինչ
արքեպիսկոպոս և ընտրբ ընտրբ չաղաչացիս՝ կարծես մ՝ ընոսլ օրչափ ինչ
պահանջէ ՝է ինչ հասարակապետութենն , պի խորչեմ ՝է կապաղուել և
՝է գաշնակաց հռոմէականբս ։

Ակներոն կալաւ զայս որոտաձայն բարբառ յիմ ընթացս իւրոյ բանախօսութե ։ Յաւգանէ , թե կատարելինա՝ արժանի է մնոնս զի գրակոս , զե զատուսինենս , և զե զայլ ամ չարաշուք քաղաքացիս՝ որոյ ընդդեմ վինեցաւ հասարակապետութեն ։ Ոչ՝ երգապրէ անձին իսկ և ծերբակուտին , վե մերկ պնայեց՝ զոր կալան առ հասարակաց

1 Մինչև ցնորք զեղծանիցիս կամ սկիզնա՝ մերովս երկայնամտութե · մինչև ցնորք և կատարութե զո այգ խաղ առնէ գնեզ · մինչև ցնորք ա այսրեսան յանգդնուեիզ լեցի նորին տապանի ։ Ոչ չարժեցին զքեզ՝ ոչ գիշերային պահակք Պալատինի , ոչ քաղաքին պահակերութե գիշերա պահք , ոչ երկիւղ ժողովրդեանն , ոչ խուռն գումարուն բարեացն ա մենեցուն , ոչ վայրս ամրաբերձ խմբելոյ զծերակոյտն , ոչ և սոցա գեմքն և տեգք աչաց ։ Ցիմանաս թե զո խորհուրգք՝ մերկապարանոց են ։ Ոչ տեսանես՝ թե զո գաւադրուն ՝է վաղուց է Թակարգեալ՝ ՝է ծանօ Թուն ամցուն սց ։ Ցմ՝ ՝է մեզ ան գեա համարեցիս , զինչ յանցելուն գիշերի , զի՞նչ ՝է մեսուն արարեր , ոՀր էիր , զորա ՝է մի վայր խմբեցեր , զինչ խորհեցար խորհուրդ ։ Աշուղ ժամիս · առաղ բարուցս ։ Ծերա կոյտն իրազեկ է ամի · հիւպատոսն տեսանէ ։ Եւ սակայն՝ կենդանի է գա ։ Կենդանի՞ · նա առանիկ գայ և ՝է ծերակոյտս · բաժանորդ լինի հասարակաց խորհրդոյս · գիտէ և նշանակէ աչքն զի մի ՝է մեզ ՝է սպանդ մահու ։ Իսկ մեք պրը արիա կանք՝ Թուիմբ զպարտութեսպատշաճն առնել , Թե ՝է օորայս խոյս տացուք ՝է կատաղուեիցէ և ՝է զինուց ։

Ա Է. 689։
Ն. Ք. 63։

Թէսաղին ։ Պանդրակրկիտ առաջի առնէ զյոլովս ի նմին առ բարւոյ , և մանաւանդ պատճառ որ լինէ անոցք անցին ի նախընթաց գիշերի ի տան պօրկիոսի լեկայ . և տեսեալ ի հանդիսի անդ՝ զոմանս ի նոցանէ՝ որք գտան յայնմ գիշերայնում ժողովն , [1] գոչեաց ։ Ահաբէ , ո՞ր էջեմ ես . ո՞ւրեմն ինչ է ինձ առաքելոցդ ներոյ հաւատակապետութիւնդ . չո՞ր չաղաչ կայցեմ ։ Ապա պնդէր , յայնմ և ի սոյն վայրէ , ի ներոյն դիպէ , յայսմ օրհասական պարտս ընկերացն՝ որ հաւատակից խորհրդարան է պետերդանին , ինձ անչինչ՝ որպ խորանանիկին պիմ և պանիեցուն ներ մահ . որպ խորհին պիորձանութիւն չաղաչես , որով և պեմ ապահովէ ։ Այս ինչպէն պեսանիեմ պնոսա , եա՝ որ հիւպատոս եմ , պիարձիս նոցա հարցանիմ ի՞ն հասա բանից երդնուիեց , և չիպնիեմ բառիս լուով կիմանիլ պայնոսիկ՝ զորս արձան էր այժմիկ իսկ ընդ առաջ հանիել ։

Ոչեա այսորիկ ի վաղ արկանէ յօգուտ զյայտարարու-
Թին զոր արարեալն էր կատիլինայ ի տան պօրկիոսի լե-
կայ , և պիղձն զոր ցուցեալ էր ելանել փուԹանակի ի
հռովմայ ։ Որ յայսմանէ առիԹ առնու յորդորել զնա ի
կատարումն այնր որոշման կամացն ։ ՓուԹացուցանէ հե-
ռանալ ի քո՛ղքէ , նա՝ Թախանձէ իսկ ։ Այլ ոչ յայտնի
սահպողական հրամանն հանէ ի՞ն այնր , և ոչ արկանէ ըզ-
քանն ը կհուռը ։ Այս զգուշաւորուի՝ որ Թերևս Թուի
յի ոմանց երկչոտուի , էր խոհեմուի ։ Օ մնաս էած կի-
կերոն յայսմ բանախօսուէ , Թէ կային բազում ծերու-
նիք՝ որք կամ ոչ տեսանէին զվտանգն՝ որ ի վե՛ր կայր հա-
սարակապետուէ . և կի՛ ի չտեսս լինէին այնմ՝ զոր տե-
սանէին . որք ստածեալ էին զակնկալուիս կատիլինայ ի
կարի լիո մեղկուԹի՛ ասացեալ զիւրեանց կարծիս ի նը-
պաստ նո՛ր , և զգեռաբոյս գաւազրուին զօրացուցեալ՝
ոչ կամելով հաւատալ այնմ ։ Այս ծերունիք՝ որք յար-
գոյից էին համարի , ձգէին զայլս բազում յիւրեանց
կարծիս . մինչ զի՝ եԹէ հիւպատոսին գործեալ էր առ
այժմ ը՛ անաչառ խոստուԹի՛ , ոչդ պահանջէր ծանրուԹի՛
յանցուածոյն և վտանգին , ի վե՛ր երևէին ոչ միայն ժամա
քաղաքացիք , այլ և բազում անձինք բարեխորհուրդք ,
որք անտեղեակ գոլով իրացն , ամբաստան լինէին զնմա-

1 Որ Վեհք գերաբուածք , և որ իւրեանք։ զոր հաւատակապետուէ օր նիցեմք , յորում կայցեմք քաղաքի ։ Ասա են՝ ասա , ով Հարք Համա գրեալք , ի Թիւս մեր , յայսմ վճ հավայը և օգոստափառ պիեզերա կան խորհրդարանիս , որք յիմ և յա մենեցուն ի մեր մտաբերեն ի ըս պանուի , որք որոշման զկործանութեան քաղաքիս , որով և զանիեզերայ ՅամիՀ։ Եւ զոսա՝ ես լինչպէն հիւպատոսս տեսանեմ , և վե հաստատակապետուէ Թէ զոտցոյն կարծիս հարցանեմ։ և զորս պարան էր ի սուր սուսերն մտնել , դեռ ձայնիւ անգամ չվերբ ևորեմ։ հմմտ. 9 ։

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։ նէ՝ թէ անգամ է և բռնաւոր։ Այլ եթէ կատիլինա իւրովի ելանէր ի հռովմայ, և երթայր կալ ի գլուխ զօրուն մալլիոսի, յայնժամ մերկանայր պատրուակ երկասց նը, իբր յանցաւորութեան լծով ի յայտ գայր, և ոչ ազ կարողանայր լինել ջատագով նը։ Այս մտածութիւնք էին քաջախոհք. և աքսոր կիկերոնի իսկ յայտնի ցոյց է վտանգին յոր անկանէր՝ ի ձեռն վիլորդուին։

Պատասխանի կատիլինայ։ Ալ թէ՝ ի բանից անտի հիւպատոսին լինելոյ եր կատիլինա որպէս չանձնահար, քանզի ոչինչ կարողանայր շփոթել զանդգնուն նը։ Զայն եբարձ հեղինակ ողբանոցի, և աղաչեաց զԵրուսիոս՝ յիշեցուցանել զնա այսպէս հետեւ։ Ա. ես. ,, ծնեալ եմ յայնիս տոհմէ՝ ի մանկութենէ ,, հետէ կալայ գնացս, յորոց բնաւորապէս ունիմ դիպիլ ,, բարձրագոյն վիճակի՝ անկարօտ գոլով դիմել ի յանցաւորութիւն։ Ալ որոյ միւ խորհիք, թէ պատրիկ ոք՝ որպիսի ,, սի եմն ես՝ ի նպաստ որոյ խօսին իւր և իւրոց նախնեաց ծառայութիւք, կամիլի կորուսանել զհասարակապետութիւնն ի ժամանակի՝ յորժամ պաշտպան և պահպան իւր ունի սա զչքոտի ոճն կիկերոն, որ հաղիւ է ի ,, քէքսայեաց հռովմայ ,,։ Ի վէր յաւել և այլ բազում նախատինս ի վէր հիւպատոսին։ Այլ ամ ծերունիք յարեան ի վէր նը, և որպէս հասարակաց թշնամի և հայրասպան վանեցին զնա զյորգին ի ժողովոյ անտի։

Ելանէ ի հռովմայ։ Յետ այսց չարահաճեաւ անցից՝ այլ ոչ նայեցաւ նա ի չափ ինչ։ Այլ գնաց վաղվաղակի ի գալ գիշերի երիւք հարիւրովք արամբք սպառազինօք, պատուէր տուեալ կեթեգոսի, և լենտուլոսի սուրայ, և այլոց գլխաւորաց գործոյն՝ յոր ձեռնարկեալն էր, զի ի գլուխ տարցին՝ զոր Թողարն անկատար. քանզի զի մահու մեռուսցեն զՀիւպատոսն, և հրձիգ արասցեն զքաղքն, խոստացեալ նը՝ թէ ընդ հուպ գտցի առ դրունս հռովմայ զօրու ծանուս։ Յայսմ վայրի առ ատելի առնելոյ զՀիւպատոսն, հուշակ հարկանէին՝ թէ աքսորեաց զկատիլինա ինքնիշխանութիւք. և թէ սա առ չհառաջելոյ զնաղաղութեան քէքսին, և իւրոց քէքսակցաց՝ ընտրեաց մեհուսանալ ի մասսիլիա։

Ատենախօսութեան կիկերոնի առ ժողովուրդն, ի վէր մեկնելոյն կատիլինայ։ Երկրորդ ձառ կատիլինեան։ Այսպիսի զրուցոյ անհնար եր չհառաջել զկիկերոն, բայց ոչ նուազեցին իւրք զնախանձայուզն նը և ըզժրուէ ի գործ։ Ժողովեաց վաղվաղակի յաւուրն երկրորդի յետ մեկնելոյն կատիլինայ՝ զժողովուրդն, և առաջի արարեալ վերահելի զայս պատահար, արգարացոյց զանձն յերկուց նախատանաց միմեանց հակառակաց՝ հասուցելոց նմա միանգամայն, ի չարախօսել ոմանց, թէ

մէղկ գտաւ՝ զի ոչ կարձեաց՛ի կենաց զՀասարակաց Թըշ- Ա. Հ. 689։
նամին. և այլոց՝ Թէ խիստ գտաւ, և գոգցես բռնաւոր, Ն. Ք. 63։
զի դատապարտեաց ասէն յաքսորս զքրիստեան ոք։ Օա-
ռաջնոյն յառաջադոյն ցուցի զշարժառիթսն՝ որոց վասն
Հարկեցաւ չսկսել կարի իմն։ Իսկ վերկրորդն բացէ՛ի
քաց զլացաւ. և առ բոլորովին արգարացուցանելոյ զանձն՝
ծանոյց զմեծիլ կատիլինայ՛ի բանսակ մտալեսոյ։ Ա՛ել-
ձեաց և սուտ եցոյց զլայն՝ զոր ասէին զկուսեալոյ նորա՛ի
մասսիլիա. և եցոյց յայս նիւթ՝ իմաստս արժանաւորս
գերագահ իշխանաւորի,

Յուշ առնէ, զի Թէ կատիլինայ չորիցին միտք և կամք,
և ինքնակամ երթայր յաքսորս՛ի մասսիլիա, արձա-
կեսցին բիւր բերանք ընդեմ հիւպատոսին, չէղիցին սմա
հնորհակալու՝ Թէ զլացաւ նոքա զմեզ ամուր ապաւինի, և
Թէ եղև գլխաւոր, և սրկ՛ի յուսահատութեի զՀշնամի-
ոք հայրենեաց. այլ դատախազեացն, Թէ առանց ինչ
դատաստանական քննուե բռնադատեաց իւրովք սպառ-
նալեօք զայր մի անմեղ երթալ յաքսորս. և Թէ գտա-
նին անձինք, որք համարեսցին զկատիլինա ոչ չարագործ՝
այլ չարաբախտ ոք. և ինքն զսորին հակառակն համարեա-
ցի՝ ոչ հիւպատոս ոք արթուն, այլ անգութ և անտանե-
լի ոմն բռնաւոր։ Նոյպա [1] պեարդ՝ ասէ, ես քնաս չդծգոհեմ,
յանկն առնեմ գնել զքլոխ իմ՛ի վանգ մըրկէս՝ զոր յարուսցէ չեմ
վը պաշարուած մտաց սուտ և անէրաս. ինչն ըէ չերծուսցէ չեմ
գնովս՛ի վանգէ ահեղ և ամպարիշտ պատերազմս՝ որ պատրաստ
ընդդէմ իմ։ Ամող սասացի՛, ըէ ես հալածեցի զկատիլինա՛ի հը-
ռովմայ, ինչն ըէ երկնչել երօտ յաւսորս։ Նայց հաւատացէք ինչ.
չէ այդպէս։ Նայ ես արդարև չերկչանամ երբէք, ըէ սա չերծ լինել
լոյ իմոյ՛ի նախանձս՝ լսել լիցի ինչ՝ զկատիլինա՛ի հալածեցի, ըէ
գնդի ըլնամաց, և արշաւէ ընդ անդաստանս զօրաց։ Նայց լսել
ոանիկ գուտ պայս լուր չերեւօրեայ ինչոցէ. և ես երկնչիմ յոյժ, գուցէ
յայնմ հետէ կղզամբէսօլէր զինս՝ ըէ զկերծէր ըռողէր ելանել, չան ըէ
զկարծ վանեցեր. սա որ՛ի պարտաստ ոանիմ զիմ պատասխանի։

1 Ընտրելի է ինձ կուրացեալ երբ զանազան՝ լուրիցիւ Թէ Լ. կատիլինա
Թալ գիմագրաւ առ մերկիկ յաշատա- զօրավարի զօրու Թշնամեացդ, և Թէ
նացս՝ որ սուտն է և անիրաւ, մի այսր անդր զինուք պարսպածի։
այն Թէ՛ի բաց լիցի յանձանց ձէ- Բայց յերիր աւուր լուիցիք. և յա-
րոց վանդ՝ ահագին և երեսնաւոր ւեստ ըէ այն երկնչիմ, զի մի ընդ յա-
պատերազմիս։ Ծնող սասացեն՝ Թէ ջանաւոք գոլոյց երբեմն՝ զի Թողի
ես արտաքսեցի զնա, միայն Թէ երբ զնա, և ոչ Թէ հալածեցի։ Բայց
Թիցե յաքսորս։ Ասյժ հաւատացէք քանզի են բազումք՝ որք զգնացա-
ինձ, չերծեալ նա։ Ոչ երբեք կուր- կանն հալածական ասեն, զինչ ա-
բացիք փաստիւքեցայոյց յանծոցն անմա- սեն սոքա, Թէ ապանեալ էր իմ
հից, զի առ բառնալոյ յինէն յաշա- զնա։ Կին. ՚ի կոփս ք. 15։

Ա· Հ· 689։ Ն· Ք· 63։ Ա՛յժմ որ ես-բով ինամս չոչա՛ ի քոյ, զպատկառե՛ք ես զինեն՝ ըն առաջեցի զնա յաւուրս, զի՞նչ արդեօք լսեալ լինիք երբ մահու սպա նեալ էր իմ զնա։

Ա՛նայուածք քանախօսուեաս հայի՛ ի կուսակիսյս կատե լինայ, ևս առաւել յայնս՝ զորս Թողեալն էր՛ ի հաւատ։ Ցաւ է ինկերոնի. զի գլուխ նոցին ոչ տարաւ զնո ես իւր. չերկինչի քնաւ յայնց՝ որք յայտնի վատացան կինու։ [1] Այո՛ա ասէ, զորս պետանէմ երբեմն անվնհեր հանդիչանե՛ ի հրապարակ հասարակաց, պալաբել զգուռան ծերպուրին, տանեալ՛ ի ծերպոյն իսկ՝ համակ խաղաղորմ և ծերանափառ, առ՛ին են՝ յորոց առաւել երկնչել ոնե՛մ, քան՛ ի բռն զորոց կոպելնայ։ Ըզնն առա սարքոս ղեալ։ Ինչարեանք են առա գրանամարտ, որ սպառնան՛ ի մե գոյ՝ գլխոց մերոց և կենաց։ Ա՛յնպէս առաւել երկնչէմ՛ ի սոցանե՛ որ չպ առաւել գիտեն, ըն պեղեհացաւ եմ ես ամ խորհրդոց սոցա. բայց և այնպես անհոգ երեմն։ Ա՛ա այսորիկ յորդորել զնոսա կեցետ երթալ իւրեանց զօրագլխի։ Չանայ ահկնկեց լի նել՛ ի նա, յայտ արարեալ՝ զի Թէ ինան՛ ի քո՛ղթ, այլ չի՛ք ակնկալել նոյ յիւրն կողմանե ներման. և Թէ առ առաջին խըրտիւն կատարման իւրեանց չարաչար խորհրդոց՝ անհերելի պատուհասեսցին ոմ՛ Թշնամիք, ոչինչ իմիք ակն կալեալ այնուհետև, բայց չղԹայից և բանտի և մահու։

Վա՛ըք ձանաչէր նա զխստուԹի՛ սրտի այսց եղեռնաւոր բաց, որ ոչ ակն ունէր Թէ անսայեն իւրոց յորդորմանց և սպառնալեաց։ Ա՛ա այսորիկ պարտ անձին վարկուցեալ ձեռն արկանել՛ ի յեղին խստուԹի, ապահովի զժողովուրդն յերկիւղէ, Թէ ուրեք երբեք ալմուկ ինչ կամ խռովուԹի՛ ի մէջ անկանիցի՛ ի պատուհասել զայնպիսի երևելի անձինս։ Ա՛ե՛ս ասէ ըզ՛ [2] զոր հանդերձեալ եմ՛ առնել,

1 Ջսոսա՝ զորս սեսանեմ ձախր առաւել՛ ի հրապարակի, զորս կա ցեալ առ գիւանաւս, զորս եկեալ և՛ ի ծերակոյտ, զորս շողշողեալ յիւղս անուշունս և զորս փողփո զեալս՛ ի ծերանիս, կամի Թէ ա ուեալ ըն իւրեանս տանէին զնւրեանց զօրականս։ Եթէ կացցեն մնասցին սոքա աստանօր, յուշ լինի ձեզ, զի ոչ՛ի զօրուէ անտի արժան է մեզ զանդիսել, այլ՛ի սոցանէ՝ որք սար տեան՛ ի զօրուէն։ Եթ որ երկիւղ զոլին ևս է· իրազեկ են, Թէ գե տակ եմ ամ՝ զոր խորհին, և սա կսին ոչինչ վնդովին։ Կին՛ ի նոպիս ը· համար 5։

Եթ ոչ այնչափ երկիւղալի է արդ զոր կասկլինայ, որչափ սոքա՝ որք սարտուցեալ կարծին՛ ի զօրուէս։ Չի ոչ սարտեան, այլ՝ Թողեալք՛ի նմանէ՛ ի գիտանոցս և՛ ի գաբանս, կացին մնացին՛ ի վր գլխոց մերոց և պարանոցաց։ Կին՛ ի նոպիս· էմ 79։

2 Եթ այս ամ այնպէս եղելոյն կուխրացիք, մինչև մեծամեծ իրը զուԹիք կատարեսցին գոյն խըրտ մամբ, վտանգք անհնարինք (փսրա տեսցեն) անհատով, պատերազմներ քին և առ անեն, մեծ և գծնդակ՝ որ չը երևեալ՛ ի յատեներից, հանդ գարտեսցի ինև միայն՝ որ առաջ նորգս եմ և ինքնակալ, առանց զՀոց յանձնէ՛ ի բաց գնելոյ։ Կին՛ ի նոպիս ը· 28։

Ա. Հ. 689. Ն. Ք. 63.

այնպէս աբասդատ՝ զի ինձանէ երդանէ՛ զնաբէսդին անաղնատ. ան-
հնարին վանգատ փարատէսդին անհատով. ներդին և ընտանի գոռ պա-
տերազմ անլռե՛լ լռեսդե, ասաղդ գլխոյ ինէրոյ և հետապատուի վաղա-
ղական հանգերձիւ՝ ի բաց դնելոյ : Օրոյգ՝ զորս արժան է առ-
նուլ՝ ի միտ. որք և իմացուցանեն, թէ կիկերոնի ար-
դէն եղեալ էր՝ ի մտի զոհ գնայից՝ զոր հանդերձեալ
էր ունել առ դատաւորս : Օ՛ի տեսցուք անվրեպ ձգըդ-
տեալ զգուշակուին՝ զոր առնէ աստանօր ժողովրդեան :

Կիկերոն ջատագովէ զդատաւորսն՝ զորս նշանակեալն հիւպատոս, զորմէ էր ամբաստանուեալ գաղտնի հետապնդութեան :

Ա՛ստի և յայսմ քաղաքի և՛ ստիպող հոգս էր կիկերոն, եթէ ժամանակ պարապոյ և մտաց անդորր զուն՝ խօսիլ զդատ մուրենայ հիւպատոսի նշանակելոյ, որ կոչեցեալն էր՝ ի դատաստան ոճի մեղապարտ գաղտնի հետապնդութե՛ի բազում չարախօսից. որոց գլխաւորք էին Ա՛ներ. սուլպիկիոս՝ որ ըստ նմա՛ի խնդիր էր հիւպատոս լինել, և կատոն՝ որ առ ժամն նշանակեալ տրիբունն էր ժողովրդեան : Ա՛մբաստանեցելոյն կային ջատագովք և՛ս երեւելիք. կրասոս, որտենսիոս և կիկերոն : Վատ իւր էր յոյժ գժուարին : Ա՛սացի իսկ՝ կարի՛ն հաւանական լինել, թէ մուրենա՝ իբրև զայլ իւր խնդրողակիցս առա-
ձեռնեալ իցէ՛ ի տուրս, ՛ի գնել զքուեայս. և հեղի-
նակուե՛ կատոնի էր ահեղ նախատաւուե՛ ընդդէմ նորա : Ա՛յս ձիշդ օրինապահ յայտ արարեալ էր՛ի ժողով ծե-
րակուտին՝ յառաջ՛ք զընտրուե՛ հիւպատոսաց. վի թէ
ոք՛ի պայծառագոյնս, (բայց՛ի սիլանոսէ՝ որ էր իւր
քեռայր,) արարեալ իցէ գաղտնի հետապնդուե՛, չան-
դերձեալ էր ամբաստան լինել գնմանէ : Ա՛կայ՛ի խոստ-
մանն, և ամբաստան եղև զմուրենայէ : Ա՛ռայ յառաջ
խաղաց յա՛մ ընթացս այսր իրողուե՛ այնպէս անկեղծուե՛
և ազնուուե՛, մինչև արժանանալ յայսմ վայրի միւսանգամ յիշատակուելո՛ի :

Անկեղծուե՛ ընթացից կատուի, որ ամբաստան լինի մուրենայէ : Պլուտարքոս՛ի խոսքն :

Պ՛ովերուե՛ էր՝ զի ամբաստանեալն նշանակեր ամբաս-
տանողն գէտ ոք և լուտս, որուե՛ հասանէր ընկերել
նմա ա՛մ ուրեք, ՛ի գիտել զամենայն արարս նո՛ր միջոցի
միոջէ, առ լուով իմացուցանել այնմ՝ որուե՛ կարի՛ն
փոյթ էր : Ա՛յսմ մտերիմ՝ որուե՛ յանձն էր՛ի մուրենայէ
այսպիսի հոգաբարձուե՛, ուշ եդեալ բարեմտուե՛ և ան-
կեղծուե՛ կատոնի, որ ո՛չ՛ի վար արկանէր խորամանկուե՛
կի՛ նենգ կի՛ հնար ինչ՝ զարմացաւ. և կալաւ առնա այն-
պիսի վստահուե՛, մինչև ե՛ գալն այգուն այգուն՛ի հրապա-
րակ՝ հարցանէր ցնա. Թէ ունիցի՛ս յայսմ աւուր միա՞
դնել գատի ամբաստանուե՛: Ա՛յլ եթէ պնախաձեռն կատո՞ն՝
ո՛չ, երթայր՛ի բայ՝ վստահացեալ լռով՛ի բան նո՛ր : Ա՛ա-

Ա՛ Հ. 689 : Ն. Ք. 63 :

տան ու՛չ յայս սակս մեղմերինակ ընդհարաւ ընդ մուրենայ , և ու՛չ իսկ ակն էած կիկերոնի՝ որ փաստաբանն էր նորա :

Աստենաբանութեն կիկերոնի :

Յամին Թէ նորընծին ընդարձակագոյն տողել վատեռնաբանուէս կիկերոնի յայսմ նուագի : Այ է անտարակոյս մի յիւրոց գեղեցկագոյն ճառից . և գուցէ ու՛չ կայցէ այլուր այնպիսի հանճար , արուեստ և ճաշակ քաղցրութեն , որպէս՝ի սմա : Հանգամանք սրտի՝ի սմա առաւել զարմացուցանեն ընդ զձիրս մտայ : Կաղցրուի , չափաւորուի և գործմանք նոր առ իւր բարեկամս , մատգրութեն և ճարտարուի նոր՝ի միաբանել զպարտաւորութիս՝ որք ամիւ Թուին հակառակք : Միհանգամայն ասացից . փողփողեն՝ի սմա հետ զհետ ամ ձիրք գեղապանծ հոգւոյ , և առնեն զատենաբանն փարելի յոյժ յաչս ամ գծնամբատաց : Կայց զի մի պատաղեցուցից զընթերցողն՝ արտասահման՝ի կարգել իրացն ելելոց , խօսեցայց միայն զայնմանէ՝ որ հայի՝ի կատոն . զորոյ կիկերոն գտանէ զհնար տկարացուցանելոյ զհեղինակուէն , առանց յերանելոյ չակնածուելոյ վայելչականաց նորուն առաքինուէ :

Ճարպուէն նր՝ի խօսել զայն ինչ՝ որ հայի՝ի կատոն :

Կարճր առնէ զնա գրուատանօք , գովէ զվսեմուէն ոգւոյն , զբարեխառնուէն , զմեծասրտուէն և զամ առաքինուեթէն , որք մեծարգի առնեն զմարդն : Կայց զծաղուս գայ զվարգապետութեէն ստոյիկեանց , առ որ յայտնի էր յարուէմն և նախանձաւորութեէն կատոնի : Կնորեաց՝ի կարծեաց այսց փիլիսոփայից զկարի իմն օտարոտիս և զանբնաւորս . զայն՝ Թէ այր իմաստուն է գեղեցիկ , Թէպետ և տգեղ՝ զԹերսիտես իցէ . և ճոխ՝ Թէպետ և չքաւոր իցէ . Թագաւոր՝ Թէպետ և ստրուկ իցէ . և Թէ ամբիծն նք՝որք չիցեն հասեալ՝ի գերագոյն կատարելութեէն առն իմաստնոյ , են ստրուկք փախստեայք , աքսորեալք , Թշնամիք և յիմարք . Թէ ամ մեղք են հաւասարք . Թէ Թեւագոյնն՝ի յանցաւորուէն գարշելի . և Թէ որ սպառնանէ աքաղաղ մի վայրապար և տալապարտուց , չէ նուազ մեղադրելի զորդի ժանտաբարոյ՝ որդ սպանեալ իցէ զհայր իւր : Կայտ յանդիմման երևիլ , քանզի մի մարկան և օտարոտի իցեն այսպիսի սկզբունք , և սրպես ծաղրաբանուէնք արկեալք՝ի կիկերոնէ՝ի վէր վարգապետուէն , գայթն անկանելն՝ի վէրնորա՝ որ գիրկս արկաներ զայնուիկ , և յայտնի խոստովաներ : Կաւ վա՛ այսորիկ կատն իսկ ու՛չ կարաց զուսպ առնել զժպատանս գեղն ակամայ , յառաջ բերեալ զոյց ինչ երկգիմի՝ փոքր մի կծուղական , Թէ ոնիմ ևթ հետագոս ծաղրական :

Պլատարքոս :

Կիկերոն ու՛չ զկայ էաւ յայսմ վայրի . և զծաղուս գալ

նը՝ եթայ նիմ Ճանապարհ անկատակ մտածուէց : Կատոնի ասացեալ էր՝ թէ օգուտն հասարակապետուէ յորդորէ զիս ամբաստան լինել զմեւրենայէ : Կիկերոն յուցանէ նմա՝ թէ խաբի . և թէ վտանգն յոր կայ այժմ պետուէին պահանջէ , զի պատեսցի նիմ հիւպատոս մտադիր հասարակաց օգտի , սիրող խաղաղուէ և հանդարտուէ ոչ միայն ի բնաւոր բուսոյ բարուց , այլ և ի վիճակէ իւրոյ բախտի : Ի խօսիլ իւրում զայս , գիտէր զի լենտուլոս և իւր համախոհք առնէին զմմ իւրեանց պատրաստուէթէ ի կոտորել եւ փոյթ չծերակոյտն , և հրձիգ առնել ըզքաղաքն : Ռիթ էառ յայսմ մտածուէ երկեցուցանել զդատաւորս . և իմացուցանել նոցա , թէ ոչ է ժամ պատաղելոյ ի դատ առանձնաւորի ուրումն , այլ ապրեցուցանելոյ պետուէին . և թէ ի վերայեցուցանել անդ զմմ բենա ի հիւպատոսուէ , որով և արկանէն միւսանգամ զհասարակապետուէն ի զգաղանս նորոյ ընտրուէ , վտանգեն զանձինս ի կորուստ հանդերձ կանամբք իւրեանց և որդւովք : Յայիսի կարեւոր մտածուէթէ ապրեաց ի սիրտ դատաւորաց . ոյք բարւոք վարկան չանուսել ամբաստանուէց գաղտնի հետապնդուէ , որովհետև փրկուէ էր հասարակաց՝ գլուխ ունիլ առաջնորդուէ երկուս հիւպատոս յամենայն յունվարի : Մուրենա արձակեցաւ . և կատոն իսկ՝ ոչ տեսցուք եւ հուպ , ոչ գժուարեցաւ ընդ յաղթանակել Ճարտարխօսուէթէ հիւպատոսին՝ իւրումն անաչառուէթէ :

Ա՛. Ձ. 689 : Ն. Ք. 63 : Մուրենա արձակի :

Կատիլինա գնայ ի բանակ մալլեո ս :

Յայսմ վայրի կատիլինա հեռանայր ի հռոմմայ : Իբրև եղ նա , գրեաց բազում թուղթս ըստ լոյն՝ զոր իւր կուսակիցք սփռեալ ծաւալէին շուրջանակի : Ի կայուէ դնէր՝ թէ անպարտ է . և յայտ առնէր թէ նեղեալ ի կողմանէ իւրոց Ճշնամեաց , տեղի տայ իւրում ձախողբախտի , և գնայ ի մասսիլիա : Ի նմին ժամանակի կատուլոս ընկալաւ ի նմանէ , և կարդաց ի ծերակուտի Թուղթ մի օտարոտի ոճով : Յայտ առնէր իսկութէ , թէ ,, լիմ վէր առի զհասարակաց դատ տառապելոյ : Յանձնարս մնեալ յանիրաւուէթէ իմոց Ճշնամեաց , և տեսեալ թէ ամբարձեալ են ի պատիւ անձինք՝ որք չէին ,, այնմ արժանի , իբրև կալան ի վէր իմ կասկած գժնդակ ,, չարեաց , ձեռն արկի ի մի միայն հնար՝ որ մնայր ինձ ի ,, հասանել զիմ պատիւ և բարօրուէթէ ՚՚ : Այս էր յայտնի բացերևուէ , և թէ կայր ինչ մնալ ի յայտարարուէթիս իւր՝ գնացք իւր յայտ առնէին : Ո՛ զի գոգցես անդէն միանգամայն յայտնեցաւ , թէ էառ զիւրև խուրձս և

Ա· Հ· 689· Ն· Ք· 63·

դահիճն, և գնդովք ոմամբք խմբելովք ի տեղեայ տեղեայ՝ ընդ որս էանց, երթեալ էր հասանել մալլիոսի։

Այս և յառաջ քան զՀոսանել կատիլինայ՝ տեսեալ թէ չուրջ են զնովաւ զօրուքն կարի լիով երևելիք, իշխեաց առնել առաջարկուիս ինչ մարկիոս ի ռեքսայ՝ որ եկեալն էր յետոյ ուրիա զօրօք։ Ռաքեաց առ նա պատգամաւորս, առաջի առնել նմա զքաջութիւն տուեալ պետից՝ որոց հրամայէր, յուսահատելոյ ի քաջութենէ իւրեանց։ Ղայրեր զնա ածել զմնաւ, թէ ,, այսչափ ,, քաղաքացւոց արժան էր հասարակապետութեան հատուցա- ,, նել ինչ սփոփանս ձախորդութեանն նոքա։ Այլ ոչ և իսկ՝ ,, ի մտի եդեալ է սոցա կոյնչիլ քաջութիւն, սաստկութեանք ,, հանել նախ զվնաս քենոս մահուան իւրեանց ,, ։ Այս- կիոսի ընկալեալ ոչ արժանն էր՝ զայս պատգամ խառն ընդ աղերսիկ և սպառնալեաց, ետ պատասխանի պատգա- մաւորացն մալլիոսի. մի ինչ ակն կալցին՝ թէ ոչ նախ զկնի ընկեց լինին։

Երկոքին խակ հրատարակեցան ի ծերակուտին՝ թշնամիք հասարակապետութեան։

Ներակուտին տեղեկացեալ այսմ ամի՝ արար գիր հրամանի, որով հրատարակեր զկատիլինա և զմալլիոս՝ թշնամիս հայրենեաց։ Յոստոստնայր զերծ լինել ի պա- տուհասէ, այնց՝ որք զկոչին ունկնին նոքա, (միայն թէ չի- ցեն մահապարտեալք,) եթէ յառաջ քան զորոշ ինչ օր եղ ցեն ի քանակ, և զնընկնկել լինին։ Հրամայեր և ևս. զի հիւպատոսք զօրաժողով լինին, և անտոնիոս վար խա- զայցէ ի վերայ կատիլինայ, և կիկերոն կացցէ ինաստ ի քաղաքին ի պահպանուի և ի պաշտպանուի նոքա։

Ցամառուն կուսակցաց կատիլինայ։

Այլ խոստմունք և ոչ սպառնալիք կարողացան յաղթել յամառուն կուսակցաց կատիլինայ։ Այլ ոք եկն յայտ- նել զոր ինչ գիտէր զգաւազրութիւն, և ոչ ոք ի բաց եղ զգնէս. որ առմնատուցանէ սալուստիոսի առիթ ողբալոյ զաղէտս[1] ժողովրդեանն հռովմկական՝ որ երկն յայնժամ ի զարձրակատար հզօր զօրուէ, ևոր ոմ աչխարհի, և վայ- լէր ներքոյ ի հանդարտուէ և ի ճոխութենէ, որք համա- րեալքն են ի մարդկանէ մեծագոյն բարիք. միանգամայն անուսանէր յիւրում գրկի քաղաքացիս այնպէս ժանաս, մինչև յամառիլ նոցա ի կորուսանել զանձինս միանգա- մայն ընդ հաղթականէ մեծագոյն բարիք. միանգամայն անուսանէր յիւրում գրկի քաղաքացիս այնպէս ժանաս, մինչև յամառիլ նոցա ի կորուսանել զանձինս միանգա-

1 Ջայնու ժամանակաւ ինքնա- կալութեն հռովմկական ժողովրդ- դեան՝ երևեցաւ ինձ ի յեսին թըշ- ուառուէ· որում թէպէտ և հնա- զանդեալ էր ամ ինչ յելիցն արեգա- կան մինչ՝ ի մուտս զինուք նուաճել և առ անին յղփուէ հանդարտուէ և ճոխուէ՝ զոյս առաջին համարին մահկանացուք, բայց և այնպէս գը- ուան քաղաքացիք, որք զանձինս և զաշխարհական կամակոր մտօք ի կորուստ յուզարկեն։ Սալուստ։

ոչինչ յարաբերուէ ունելով ցոյն վայր ընդ կաթուղիկոսի՝ գնեթ հասարակաց ծանուցեալ, զոքան յարեցան յայսոսիկ աղետալի պարագայս՝ ի նա. ընդ որս և որդի միոյ՝ի ծերունեաց՝ որում անուն էր Ն. փուլլիոս։ Ասայց հայր նոր զՀետ առաքեաց առս. որոց հասեալ նմա՝ իբրև դաթ ձուկին, ետ զնա սպանանել՝ իբրաւմբք հայրական իշխանութե, ասելով. ,, Ծնայ ¹ զքեզ ոչ վասն կաթուղիկոսի, այլ ,, վասն հայրենեաց։

Ա Ե Ե Ա Ա Ա

Ա՛ Հ· 689· Ն· Ք· 63· զՀեծելազօրս՝ յորմէ իւր կողմն խոպառ եր վերջացեալ· Ա՛ի այսորիկ յանձն արար ումբրենոսի ումեմն վաճառա-
կանի՝ որոյ բաղում ծանօթք էին ի գաղղիա, ուր արա-
բեալ էր տուրևառ ընդ բազում ժամանակս, հետապը-
տել զնոցայն պատրաստուն կամայ·

Ումբրենոս մատչի առ նա՛ի քաղաքամիջի, և հարցփորձ առնէ զլուծ երկրի նո՛ր, և զվիճակէ յոր կայր ազգ նոցա· Ի գանգատել աղերսոդայ՝ կեղծաւորեցաւ սրտցաւուն· Օ՛ր՞նչ պինդալոյծ է ձեր ասէ զերծանելոյ յայսչափ էարեաց· Լ-
աւն պատասխանի, Թէ չունիմք և ո՛չ մի· և Թէ՝ մի մի-
այն հնար զերծանելոյ մերոյ՛ի Թշուառուէ աստի՛ է մահ·
Ալ կնեալ անդրէն ումբրենոսի՝ ասէ· Ա՛ւ այդպէս· Ըն ոչ
էղէ և ձեռներեց յորոշեաց կամաց, ես ձեզ ցոյց հնար զերծա-
նելոյ՛ի պատուական այսր· Ա՛յս բանիւ զուարթացուցին
զսիրտս աղերսոդայ· Ա՛զգէն գնա ախտակից լինել իւ-
րեանց, ստուգել նմա՛Թէ չիք ինչ դժուարին և վտանգա-
ւոր, յոր ոչ կամակար ձեռն արկանիցեմք, առ ապրեցուցա-
նել զազգ մեր՛ի պարտեաց՝ որք նեղեն զնա· Հասուցել
զնա ումբրենոսի՝ ուր կամք իւր էին, մուծանել զնոսա՛ի
տուն Ա· բրուտոսի՝ առն սեմպրոնեայ, զորմէ խօսեցաք·
(Բրուտոս եր կայսեր Հեռի՛ի Հռովմայ·) Լուեալ անդր
զգաբինիոս, զի լաւ ևս Ճչգրտեսցէ և Հաւատարիմ արաս-
ցէ վիւր ասացեալն· Հայմժամ յայտնէ աղերսոդայ զնմ
առաջարկուէն դաւադրուեն· անուանի զնո՛ր և լիաւորսն,
յորս յաւելու և քանի մի երևելի անձինս՝ որք չէին այնմ
բաժանորդ, առ առաւել ևս վստահացուցանելոյ զայն
գաղղիացիս· և առեալ՛ի նոցանէ խոստումն մտանելոյ
յայն դաւադրութի՛ն, առաքեաց զնոսա անդրէն՛ի տունս
իւրեանց·

Սաքս խմ-
ցուցանէն
զմտ կիկերո-
նէ·

Ա՛այց իբրև եղեն առանձինն, և վմտաւ ածին զայն՝ որ
փոքր մի յառաջ առաջարկեցաւ նոցա, գտան՛ի մէծ վա-
րանս· Ա՛սէր Թշուառ վիճակ ազգի իւրեանց, բնաւոր
քերուածի՛ն մարտ, ակնկալուԹի՛ մեծամեծ արգասեաց
յաղԹուէ՝ էին հզօր դրդիչք· Ա՛նդի զմտաւ ածեալ ըզ-
քաւուն զորուէ ինքնակալուէ հռովմայեցւոց՝ չտեսանէին
ինչ որոգայԹ կամ վտանգ վասն նոցա, նա՝ անվրէպ
հատուցումն քարի, եԹէ յայտնեսցեն զայնպիսի վտան-
գաւոր դաւադրուէ· Ի բրև այնպէս առ վայր մի՛ի տարա-
կուսի կային, բարեբաղդուԹի՛ հասարակապետուէ յաղ-
Ըեաց (ասէ սալուստիոս), նա՝ վերնահնամ տեսչուէն
կամեցաւ ապրեցուցանել զՀռովմ, որ էր՛ի նմանէ կար-
գեալ մայրաքաղաք տիեզերաց· Ա՛ի այսորիկ ալլոբրոգք

Ա. Հ. 689։ Ն. Ք. 63։

հաստատեցին՝ի միտս երթալ առ Կ. փաբիոս սանդա, որ էր թեւարկու և խնամակալ ազգի իւրեանց, զի իջաներ՝ի Կ. փաբիոսէ ալեքբոգացոյ։ Վիտեւ ամ՛ոք, զի ըստ սովորութեանց հռովմայեցւոց, յաղթականք ժողովրդոց՝ երթ՛ էին իւրեանք, և երթ՛ ծնունդք իւրեանց՝ լինէին պաշտպանք նոցին։ Վասղիայիք իմացուցանեն սանդային՝ որչափ ինչ ասացաւ նմ՛ յումբրենոսէ։ Անդա իմացոյց վաղվաղակի կիկերոնի, որ պատուիրեաց ալեքբոգացոյ նախանձախնդիր երևիլ յաջողուածոյ դաւադրութեանն, խօսիլ ընդ դաւադրս, առնել նմ՛ մեծամեծ խոստմունս, և ջանալ ընդունիլ՝ի նոցանէ այնպիսի ցոյցս՝ որով հնար իցէ ձգել տեղ զտուգութեն դաւադրութեանն։

Խորհուրդ դաւադրացն հրդիռ առնէ զհռովմ։

Խորհուրդ դաւադրացն կայմ էր ամիս, կերպարանել պյեսին կերպարանուի։ Ք. բեստիա՝ նշանակեալ տրիբուն ժողովրդեան, որ մօտ էր մտանել՝ի պաշտօն, հանդերձեալ էր խմբել զժողովուրդն, և՝ի լուտանս ձեռնարկել կիկերոնի՝ իբրև առն երկչոտի՝ որ ընդ ոչ ընդ զքո՛ն մնոտի արշաւօք, և իւրով անհիմն երկիւղիւ յարուցանէր տարժանաւոր կռիւ։ Ք. յս զոյգք հանդերձեալ էին լինել դրօշ, առ խմացուցանել իրագիտոյ՝ գործել իւրաքանչիւր՝ի գալ գիշերի ըստ ըստ և ըստ պաշտամանն՝ որ էր նմ՛ նշանակեալ։ Ստատիլեոսի և գաբինիոսի հասանէր հրդեհ արկանել յերկոտասան թաղս հռովմայ միանգամայն։ Ձայս սակս ունէին ընդ իւրեանց հրամանաւ քաղմուխ յոյժ արանց՝ որոց պատրաստեալ էր նիւթս հրոյթեցոյ. այլք էին սահմանեալք՝ի խնուլ զջրմուղս և զաղբիւրս, և սպանանել զայնոսիկ՝ որք գնային առնուլ ջուր։ Ք. յսախսի իմն աղմկաւ կարծէին կարողանալ մտանել՝ի տուն կիկերոնի և այլոց, զորս հանդերձեալ էին խոշտընդել։ Կենեդոսի յանձն առեալ էր պաշարել ըզտուն հիւպատոսին, և սպանանել զնա։ Իւրաքանչիւր՝ի սիկաւեանց ունէր զիւր վէնտի։ Ամանք յորդւոց հանդերձեալ էին սպանանել զծնողս իւրեանց, և կանայք ոմանք զարս իւրեանց։ Ձերբակալել կամէին զորդիս պոմպէոսի՝ ոչ՝ի սպանանել, այլ՝ի պատանդել, առ անձնապահ լինելոյ՝ի վրէժխնդրութենէ հօր նոցա, որոյ դարձի ինային ժամ՝ի ժամէ։ Ձայսպիսուա՛ ահեղ աղմկի կատիլինա հանդերձեալ էր գտանիլ առ դուրս հռովմայ, զի թափարգել և հարկանել զնոսա՝ որք փախչէին՝ի քաղաքէ, և միանալ ընդ աւազնորդս արիւնախանձ ապիրատուեաց։

Ք. յս ինչ հարցփորձ ոչ կայր՝ի միջի, բայց միայն վասն աւուրն։ Ք. ենտուլոս արկանէր զջանն՝ի սատուրնեան

Ա՝ Հ. 689։ Ն. Ք. 63։ աւուրս , որք անկանէին մեծ 'ի կատարած դեկտեմբերի, որ էր ժամանակ ընդարձակուէ և խեղկատակ ուրախու- թեան և ցոփութեան , և կարի ինն պատշաճող 'ի դիւրել ըզ- ձեռնարկն ։ Լեղեգոս ոչ ժուժայր դոյին յապաղման ։ Այս էր բռնագոյն և կատաղի ք զամենեսին , այր ձեռնե- րեց ՝ որ խելամուտ էր պիտանութեան ժամանակաւ լի- նելոյ ։ Ոչ լուեր 'ի գանգատելոյ զյապաղմանէ և վերկ- չոտութեէ իւրոց ընկերաց ։ Պնդեր ՝ թէ տարտամութէ իւրեանց և յօրէ օր արկանելով, կորուսանել ունին զքա- ջագէպ առիթս . և թէ յայսպիսում վտանգի գործել պարտ է, և ոչ սկզբանէ դեգերիլ ։ Զինին կոչմանն (ասէ), թէ դուընաքեայ ինչ մանն հետևող լիներ ինձ , Թողուի բնաւեցունց կալ մնալ 'ի Թմրուէ իւրեանց , և երթայր ընդ սուր հանել զմեր զժողով ծերակուտին ։

Ալլոբրոգաց կորզեն 'ի ձե- ռաց լենտու- լոսի , և այ- լոց գնաւո- րաց գաւադ- րութեն Թուղթ- ինչ ։

